

27-28(529-530)

18.10.2018

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՇ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐԿԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



Սիրելի՛ ուսուցիչներ,
Արցախի Հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Մենք բոլորս գիտենք, թե ինչ բարոյ, բայց եւ չափազանց կարեւոր

ու պատասխանատու աշխատանք են կատարում ուսուցիչները, ինչքան ուժ ու եռանդ են ներդրում նրանք այդ աշխատանքում, ինչքան ջանք են թափում, որպեսզի մատաղ սերունդը լինի կիրթ ու դաստիարակված, ստանա հիմնավոր գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ, գտնի իր

արժանի տեղը կյանքում:

Մենք խորապես երախտապարտ ենք ձեզ, սիրելի՛ ուսուցիչներ, երախտապարտ ենք ձեր համբերատար ու սրտացավ վերաբերմունքի, ձեր անձնվիրության համար, այն հոգատարության ու ջերմության, որ տարիներ շարունակ դուք տալիս եք ձեր սաներին: Ձեր ամենօրյա քրտնաջան աշխատանքն արժանի է ամենաբարձր գնահատանքի ու մեծ հարգանքի:

Պետությունը հատուկ ուշադրություն է դարձնում կրթության եւ գիտության ոլորտում առկա խնդիրների լուծմանը, անում է հնարավորը, որպեսզի Արցախի երեխաներն ստանան նորմալ կրթություն, որպեսզի մեր ուսուցիչներն աշխատեն ժամանակակից պահանջներին համապատասխանող ուսումնական հաստատություններում: Եվ այդ գործընթացը կրելու է շարունակական բնույթ:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ ձեզ, թանկագին ուսուցիչներ, եւ մաղթում խաղաղություն, քաջառողջություն, հաջողություններ ու ամենայն բարիք:

ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

Հոկտեմբերի 5-ին ԱՀ նախագահի նստավայրում տեղի է ունեցել Ուսուցչի օրվա կապակցությամբ պարզապես արարողություն: Նախագահ Բակո Սահակյանն անգնահատելի է համարել ուսուցչի դերակատարությունը մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, կրթության, ազգային արժեքների եւ ավանդույթների պահպանման գործում՝ որպես պետականաշինության գործընթացի կարևոր հիմնասյուներից մեկը:

Նախագահի հրամանագրով մի խումբ ուսուցիչներ արժանացել են պատվավոր կոչումների ու պետական պարգևի:

«ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» պատվավոր կոչման՝

Իլյաս Սերգեյի Պողոսյան - Հարություն շրջանի Ազոխի միջնակարգ դպրոցի տնօրեն

Շահեն Սարգսի Սարգսյան - Ասկերանի շրջանի Ազնեքի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ

Ավետյան Արսենի Ասրյան - Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության եւ սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Վալերիկ Սամվելի Սահակյան - թոշակառու

Ավետյան Սերգեյի Պետրոսյան - Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ֆիզիկայի ուսուցչուհի

Սլավա Արշակի Գրիգորյան - Ասկերանի շրջանի Աստղաշենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ

«ԼՂՀ վաստակավոր մարզիչ» պատվավոր կոչման՝

Դավիթ Լևոնի Գրիգորյան - ԼՂՀ կամավոր ֆիզկուլտուրային մարզական կենտրոնի ուշու մարզաձևի մարզիչ - մանկավարժ, միջազգային կարգի սպորտի վարպետ

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



ԱՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ հոկտեմբերի 8-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի ունեցավ ուսուցիչների մեծարժան երեկո: Այն պետք է լինեի հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի օրը, սակայն, կապված հայազգի մեծ շանտոնյե Շառլ Ազնավուրի մահվան հետ, հետաձգվել էր:

Երեկոյին ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Աժ նախագահ Աշոտ Դուլյանը, պետնախարար Գրիգորի Սարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք: Հրավիրված էին հանրապետության բոլոր շրջաններից գործող եւ թոշակառու ուսուցիչներ:

Երեկոն վարող՝ լրագրող Ծովինար Բարխուդարյանը ներկայացրեց ԱՀ նախագահի շնորհավորանքի ուղերձն ուսուցիչներին մասնագիտական տոնի առթիվ: Ողջույնի եւ շնորհավորանքի խոսքով հանդես եկավ ԱՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

«Այսօր մենք հավաքվել ենք՝ երախտագիտության ու գնահատանքի խոսք ասելու մեր ուսուցիչներին: Մարդկանց, որոնց դերն անգնահատելի է սերունդների կրթության ու դաստիարակության, յուրաքանչյուր երեխայի բնատուր եւ մտավոր կարողությունները, շնորհքը, տաղանդը բացահայտելու եւ զարգացնելու, անհատականությունն ձևավորելու մեջ: Լավագույն վկայությունը, որ մեր ուսուցիչներին հաջողվել է անգամ ամենադժվար պայմաններում ճիշտ կրթել ու դաստիարակել սերունդներին, հաստատվել է մեր անկախության պատմությամբ, պատերազմում տարած հաղթանակով, պետականաշինության անցած ճանապարհով, ամենատարբեր ոլորտներում մեր ձեթերումներով»,- ասաց նախարարը: Նշելով, որ կրթության ոլորտի խնդիրները միշտ եղել են իշխանությունների ուշադրության կենտրոնում, նա փաստեց, որ միայն վերջին 7 տարիներին Արցախում 100 դպրոց

եւ նախադպրոցական հաստատություն է հիմնվել կառուցվել կամ նորոգվել, հազարավոր երեխաների համար ապահովվել են կրթության ժամանակակից պայմաններ: Բայց այդքանով համոզված, կրթության համակարգի խնդիրներն անսպառ են, եւ լուծված խնդիրներին փոխարինում են նորերը, որովհետեւ ժամանակն է փոխվում, կյանքն է փոխվում, գիտական ու տեխնոլոգիական առաջընթացը նոր պահանջներ առաջադրում, ինչին պետք է կարողանալ արագ արձագանքել՝ կատարելով նաև համակարգային եւ բովանդակային փոփոխություններ: Նախարարը հավաստեց, որ կրթությունն Արցախում անվտանգության բաղադրիչ է, եւ այս իրողությունից ելնելով՝ հիմնվելով լավագույն փորձի վրա, պետք է ստեղծել մեր կրթամակարդը՝ մեր առանձնահատկություններին եւ արժեհամակարգին համապատասխան: Նախարարի հանդգնամբ՝ պետք է հոգալ, որ Արցախի գյուղերում ավելանա աշակերտների թիվը, եւ գյուղում սպորտ

տագիտություն հայտնեց բոլոր այն ուսուցիչներին, ովքեր նախորդ ուսումնականում ավարտել են իրենց առաքելությունը դպրոցում՝ տեղը զիջել երիտասարդ ու սկսելու ուսուցիչներին: Նախարարության անունից շնորհակալագրեր եւ դրամական պարգևներ հանձնվեցին վաստակած հանգստի անցած ուսուցիչներին՝ մի նոր, գեղեցիկ ավանդույթի

իր սրտի խոսքն ասաց առաջին անգամ Ուսուցչի մասնագիտական տոն վայելող՝ Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի էմմա Պողոսյանը:

Սկսնակ ուսուցիչները ծրարված պատգամներ ստացան վաստակաշատ մանկավարժներից: Թոշակի անցած ուսուցչուհի Էլզա Խաչատրյանը մասնավորապես գրել է.

«Սիրեք երեխաներին, ձեր երջանկությունը փնտրեք նաև նրանց մեջ: Մի բավարարվեք այն ամենով, ինչ գիտեք, հայ մանուկներին կրթել սրբազան պարտքն է հայ ուսուցչի: Եղեք անաչառ, երեխաներն ամենամեծ դատավորներն են: Դպրոցի, դասարանի դռներից այն կողմ մտաքցեք ձեր առօրյա հոգսերը, տրամադրություններն ու անախորժությունները: Աստված տա, որ դրանք չլինեն ձեր կյանքում»:

Երեկոյին առանձին ուշադրության առանձնացան մի խումբ երիտասարդ ուսուցիչներ: Նրանք «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով Արցախի գյուղերում աշխատող մասնագետներն են, որոնք առայժմ 17-ն են: Նախարարության կողմից նրանք էլ արժանացան նվերների:

Հանրապետության աշակերտության անունից յուրօրինակ շնորհակալությամբ հանդես եկան մարաթաղաքի բոլոր դպրոցներից աշակերտները:

Երեկոն զարդարեցին մշակութային համարները, որոնք ապահովեցին ուսուցիչների տաղանդավոր ու շնորհալի սաները՝ Սայաթ-Նովայի անվան ուսումնարանի, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի «Բաղաբի տղաներ» նորաստեղծ համույթի երաժիշտները, Ստեփանակերտի ՄՊՍԿ-ի սաները, Ազոխի դպրոցականները, «Արցախի ձայներ»-ը, կրթության պետական տեսուչ՝ տաղանդավոր երգիչ Վազգեն Առաքելյանը, վաստակավոր արտիստ Տաթև Բալայանը:

Բեմում երեխաներն էին ազգային շուրջպար բռնել, իսկ դահլիճում՝ «Դասավանդիր, Հայաստան»-ի երիտասարդ ուսուցիչները՝ ստեղծելով մեծ ոգևորություն:

Օրը պարզապես առիթ է մեր ուսուցիչներին եւ մեկ անգամ բարձրաձայն ասելու՝ շնորհակալություն: Իրականում նրանց երախտապարտ լինելու զգացումը բոլորս հոգու խորքում զգում ենք ամեն օր:



երեխան զրկված չլինի որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից, լրացուցիչ միջոցներ ներգրավել՝ ուսուցչի աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու, մանկավարժի մասնագիտության գրավորությունը բարձրացնելու համար: Եվ մեկ անգամ շնորհավորելով ուսուցիչներին՝ վստահեցրեց, որ բոլոր ջանքերն այսուհետ եւ ուղղված են լինելու նրանց համար արժանապատիվ կյանքի պայմաններ ստեղծելուն: Նախարարն առանձնահատուկ շնորհավորանքներ հղեց եւ երախ-

տեց, որ սերունդներ դաստիարակելու այդ վեհ ու պատվավոր կոչմանը միշտ մնաք հավատարիմ, որ ձեր սաները միշտ հիշեն ձեզ ու հպարտանան, որ իրենց կյանքի դասեր եք տվել, ու որքան շատ մարդ է ձեր շնորհիվ իր տեղը գտել կյանքում, այնքան ավելի գնահատված եք: Որքան հաճելի են բոլոր շնորհավորանքներն ու պատգամները, որ մենք ստանում ենք. դա է մեր գնահատականը, որին ձգտում ու սպասում է իսկական ուսուցիչը»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԴՊՐՈՑԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

«ԻՄ ՀՈԳԻՆ ՀԻՄԱ ՁԵՉ ՀԵՏ Է»

Հոկտեմբերի 15-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի տիկինը, մանկագիր Նունե Սարգսյանը, որն ամուսնու հետ երկօրյա այցով Արցախում էր, ԱՀ նախագահի տիկին Անահիտ Սահակյանի ու կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի ուղեկցությամբ եղավ մայրաքաղաքի Խ. Աբովյանի անվան հ. 1 և Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցներում ու ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզում: Նա տնօրենների հետ շրջել է կրթական հաստատություններով, ծանոթացել դրանց պայմաններին, մտերմիկ զրույց ունեցել սաների և ուսուցիչների հետ:

հորինել և խնդրել իրենց ծնողներին գրի առնել դրանք, իսկ երբ մեծանան, ինքները կգրեն, ինչպես ժամանակին ինքն է արել: Խոստացավ շատ շուտով այցելել նրանց և ծանոթանալ նրանց հորինած պատմություններին:

ՀՀ նախագահի տիկինը Արցախի պատվարժան տիկնանց հետ այնուհետև այցելեց «Սոսե» մանկապարտեզ: Այստեղ աղուհացով նրանց դիմավորեց արցախյան տարագրված մանկապարտեզի սանուհին: Ն. Սարգսյանը հետաքրքրվեց նախակրթարանի պատմությամբ և առհասարակ Արցախում նախադպրոցական հաստատությունների վիճակով: Նախարար Ն. Աղաբալյանը հակիճ ներկայացրեց այդ մասին: Ն. Սարգսյանը շրջեց մանկապարտեզով և իր գոհունակությունը հայտնեց տեսածից:

Մանկապարտեզի դահլիճում փոքրիկ հանդիսականների և դաստիարակների հետ հյուրերը դիտեցին Ն. Սարգսյանի «Քաջալ ոգնին» հեքիաթի արցախյան բարբառով ներկայացումը (բեմադրու-



կան Նախարար Ն. Աղաբալյանը, աշակերտներին ծանոթացնելով Նունե Սարգսյանի հետ, նշել է, որ նա երկու տասնյակից ավելի գրքերի հեղինակ է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նրա գրքերը լույս են տեսել նաև Հայաստանի տարբեր մարզերի բարբառներով, իսկ 2016թ. ԱՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ նաև Արցախի բարբառով:

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի թատերական ստուդիայի, գեղարվեստական ղեկավար՝ Նարինե Քոչարյան): Այդտեղ ներկա՝ հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանն ասաց, որ ներկայացումը շրջել է Արցախի գյուղերով և լավ ընդունելություն գտել:

Ն. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց մանկապարտեզի կուլեկտիվին, բեմադրության հեղինակներին ու դերասաններին և գրքեր նվիրեց մանկապարտեզին՝ ասելով, որ դարձյալ կայցելի:

Աշակերտների հետ հանդիպմանը Նունե Սարգսյանը նրանց խորհուրդ տվեց լավ սովորել, ժամանակն իզուր չվատնել, մասնագիտություն ընտրել:



լիս անսալ սրտի ծայրին ու խելքին և նաև հաշվի առնել Արցախի պահանջարկը:

Հանդիպումներից հետո լրագրողներին տված ճեպագրույցում Նունե Սարգսյանն ասաց.

- Ճանաչողական այցով եմ Արցախում, հիացած եմ ամեն ինչով՝ բնությամբ, մարդկանցով, երեխաներով: Իմ առաջին այցն է, բայց վերջինը չի լինի, իմ հոգին հիմա կապված է ձեզ հետ:

Մեր այն հարցին, թե ինչ ստեղծագործության վրա է աշխատում, Ն. Սարգսյանը պատասխանեց, որ վեցամյա թռուռու հետ հորինել է մի պատմություն կապույտ գետածիու և վարդագույն մկնիկի մասին, որը շուտով լույս կտեսնի գրքով, և հույս հայտնեց, որ դա էլ կթարգմանվի Արցախի բարբառով:

- Սա իմ առաջին այցն է, բայց երբեք ոչ վերջինը, ես սիրեցի Արցախը, այս գեղեցիկ երկրամասն ու նրա ժողովրդին: Անպայման նորից ու նորից կգամ: Հատկապես ուզում եմ ամրապնդել իմ կապը Արցախի երեխաների հետ, - հրաժեշտին ասաց նա:

Ասաց, որ առաջին անգամ է Արցախում և հիացած է նրա գեղեցկությամբ ու ժողովրդով: Եղել է Դաղիվանքում, որն իսկապես հրաշք է: Գոհ մնաց աշակերտների պատասխաններից: «Հիշեք, դուք հատուկ եք, դուք հայ եք՝ արցախցի հայ և հատուկ առաքելություն ունեք այս երկրի հաղթա», - դիմելով աշակերտներին՝ ասաց նա:

Ն. Սարգսյանը ներկա եղավ հ. 1 դպրոցի դահլիճում ընթացող ազգային երգ-պարի դասընթացին, որտեղ այդ պահին երեխաներն իրենց ուսուցչուհու հետ ազգային պար էին սովորում: Ինքն էլ միացավ շուրջապարին:

Ներկա եղավ կրթության նախարարության խմբի պարապմունքին: Երկխոսության մեջ մտավ նրանց հետ, ծանոթացրեց հետը բերած իր գրքերին՝ համառոտ ներկայացնելով դրանց բովանդակությունը: Երեխաներին խորհուրդ տվեց փոքրիկ պատմություններ

ԵՎԱ ՄԵԿ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՐԹՕՋԱՆԻ

Ուսուցչի տոնի նախօրեին մեծ տոնախմբություն տեղի ունեցավ Ստեփանակերտի Հոլի. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցում: Վերջապես իրականություն դարձավ մանկավարժական, աշակերտական և ծնողական հասարակության տարիների երազանքը: Ուսումնական գործընթացն անցկացվում է ամբողջովին հիմնանորոգված, ժամանակակից պահանջներին համապատասխան դպրոցական շենքում: Այն իրականացվել է պետական միջոցներով և «Հայաստան» համահայկական հիմնադրամի խողովակներով՝ աներկաբեմալ բարերար Ջերալդ Թրփանջյանի և իր ընտանիքի մեծ աջակցությամբ: Հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, պետական այրեր, «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվիրակությունը՝ գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանի գլխավորությամբ, կրթական համակարգի ներկայացուցիչներ: Գործընկերների ուրախությունը կիսելու էին եկել մայրաքաղաքի դպրոցներից:



իր տեսքը, և հնարավոր չէ համեմատության եզրեր անցկացնել հին և նոր դպրոցական շենքերի միջև: Շինարարական աշխատանքներին զուգընթաց ընթացում էին ուսումնական պարասնույթները: Տնօրենի հավաստմամբ՝ ուսումնական գործընթացը թույլ է տալիս: Նա վստահեցրեց, որ արժանի կհատուցեն՝ ուսման ասպարեզում արձանագրելով նորանոր հաջողություններ:

նացվել են տարբեր բարեգործական ծրագրեր, որոնցից և օգտվում են հազարավոր շահառուներ հայկական երկու հանրապետություններում: Այդ ծրագրերը գործում են զուգահեռ. Արցախում գյուղական համայնքների զարգացման և դպրոցաշինության ծրագրերին զուգընթաց վերջին տարիներին մեկնարկել է ևս մեկ՝ Արցախի պետական համալսարանի վերակառուցման ծրագիրը, ինչն Արցախում նաև մասնագիտական կրթության բարեփոխման երաշխիքն է:



Հավարտ իր ելույթի՝ Ն. Աղաբալյանը խոսքն ուղղեց աշխարհի տարբեր կրթոջաներում ապրող մեր հայրենակիցներին՝ վստահեցնելով, որ նրանց կողմից Արցախի սուրբ հողին պահ տրված յուրաքանչյուր սերմ ծիլ ու պտուղ է տալիս: «Վկայությունն այս հիմնանորոգված դպրոցը և երեխաներն են և այն գարնանքը, որ ապրում է յուրաքանչյուր ոք՝ ոտք դնելով Արցախի հողին և ավերակների փոխարեն տեսնելով ժաղկող երկիր, տեսնելով ժպիտ մարդկանց դեմքերին և լեռների մեջ թևածող անկտորուն ոգի: Հիշեք ու հավատացե՛ք՝ մեր միասնությունն ապահովեց հայոց պետականության վերստեղծումը, մեր միասնությունն էլ պետք է ապահովի միացյալ հայրենիքի գաղափարի իրագործումը», - ասաց նախարարը:

Միջոցառումը վարող՝ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանն ասաց, որ դպրոցաշինությունն այն ծրագրային ուղղությունն է, որը հրադադարի հաստատումից ի վեր անշեղորեն շարունակում են Արցախի իշխանությունները՝ այդ նպատակի համար ներգրավելով պետական և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ:

Ողջույնի իր խոսքում ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանն ասաց, որ դպրոցաշինությունն այն ծրագրային ուղղությունն է, որը հրադադարի հաստատումից ի վեր անշեղորեն շարունակում են Արցախի իշխանությունները՝ այդ նպատակի համար ներգրավելով պետական և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ: Միայն վերջին 7 տարվա ընթացքում Արցախում կառուցված կամ հիմնանորոգված շուրջ 100 դպրոցից և նախադպրոցական հաստատություններից 20-ը իրականացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգնությամբ և մասնավոր միջոցներ:

Ողջույնի և շնորհակալության խոսք ասաց դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանը: Դպրոցի տնօրինության, մանկավարժական և աշակերտական կուլեկտիվների անունից նա խորին երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց՝ ԱՀ կառավարությանը, երկրի իշխանություններին՝ դպրոցի և ուսուցչի նկատմամբ օրեցօր աճող ուշադրության համար, «Թրփանջյան ընտանիք» հիմնադրամին, «Հայաստան» հիմնադրամի ԱՄՆ կազմակերպությանը, «Խաչեն» շինարարական կազմակերպությանը, որոնք կյանքի են կոչել այս ազգանվեր ծրագիրը: Դպրոցն ամբողջովին փոխել է

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ԱՐՊՂ ՌԵԿՏՈՐ

վը և բարձունքը: Որ նրանցից յուրաքանչյուրը դառնա օրինակելի, լուսավոր գավակները մեր ազգի: Աղոթք բարձրացրեց Արցախի Հանրապետության անասա- նության, խաղաղության, բարգավաճման համար: «Ար- ցախ աշխարհը մեր հայրենիքի համար բաբախող սիրտ մըն է, հոգին է, որովհետև ինչքան ազատ է, ինչ- քան կապրի ազատ և անկախ Արցախ աշխարհը, այն- քան նաև Հայաստանը պիտի շարունակի ըլլալ հավի- տենականությունը մեր ժողովրդի կյանքի մեջ:

Մեր հատուկ սերը և երախտիքը «Հայաստան» հա- մահայկական հիմնադրամի այս նվիրական աստվա- ծության, որ իրապես կշարունակե իր հայրենամարտը առաքելությունը Հայաստանի և ազատատենչ Արցախի բարգավաճ կյանքի համար, և մենք պիտի շարունա- կենք մեր բարի ծառայությունը և առաքելությունը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը դարձնե- լու համար այն հիմնական առաքելությունը, որն իր մեջ կհավաքե նաև մեր ժողովրդի գավակները ի Հայաս- տան-Արցախ և ի Սփյուռու աշխարհի»:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի նո- րընտիր գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը, որի այս պաշտոնում առաջին այցը զուգահեյտեց դպրոցի բացմանը, ասաց, որ այսօր երկրի կայունության, զար- զացման և իրական անկախության համար մեզ բոլորիս անհրաժեշտ են լուրջ կրթություն և լուրջ գիտելիքներ: «Այսօր ընդհանրապես Հայաստանում թե Արցախում պետք է լուրջ ուշադրություն դարձնել կրթական հաս- անակներին, նաև կրթության բովանդակության բարձրացմանը, որը կբերի Հայաստանի և Արցախի հե- տագա զարգացմանը», և մաղթեց երեխաներին կանաչ ճանապարհի այս դպրոցում և հիանալի ապագա ազատ, անկախ երկրում:



տատություններին, նաև կրթության բովանդակության բարձրացմանը, որը կբերի Հայաստանի և Արցախի հե- տագա զարգացմանը», և մաղթեց երեխաներին կանաչ ճանապարհի այս դպրոցում և հիանալի ապագա ազատ, անկախ երկրում:

Նա հիմնադրամի անունից նվեր ուներ բարերար Թր- փանջյան ընտանիքին՝ դպրոցի մանրակերտը և հանձ- նեց տիկին Մեհրանյանին: Նրան փոխանցելու համար:

Դպրոցի անունից շնորհակալագիր և նվեր հանձնե- ցին բարերարի ընտանիքին և հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Արշամյանին: Շնորհակալագրում մասնավո- րապես գրված է. «Սիրելի՛ բարերար, ձեր անունը մե- կընդմիջտ կապվում է կրթության պատմության հետ, և հավատացած եղեք, որ ձեր բարեգործությունը կհիշվի դարերդար՝ մեծապես նպաստելով Արցախում արժանա- պատիվ սերունդների կրթմանն ու դաստիարակմանը»:

Դպրոցի տնօրեն Ա. Անտոնյանի, «Հայաստան» հիմ- նադրամի ԱՄՆ-ի Արևմտյան շրջանի կազմակերպու- թյան ատենապետուհի Մ. Մեհրանյանի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Արշամյանի կողմից դպրոցի բակում տնկվեց երեք եղևնի՝ այս գեղեցիկ օրվա հուշ, որպես Հայաստան-Ար- ցախ-Սփյուռք եռամասնական խորհրդանիշ: Դպրոցի մուտքը երիզող կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց տիկին Մարիա Մեհրանյանին, դպրոցի լավա- գույն աշակերտուհի Շուշաննա Բալայանին, «Հայաս- տան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօ- րեն Հայկակ Արշամյանին:

Հովանա արքայազնուհի կողմից կատարվեց դպ- րոցի օժանդակություն: Այն նախագահը և հյուրե- րը շրջեցին դպրոցում, ծանոթացան պայմաններին: Բո- լոր առարկաների գծով կան կաբինետներ, պակաս բան գրեթե չկա, իսկ որոշ հարցեր (օրինակ՝ ֆիզիկայի կաբինետի համար՝ համակարգիչներ) նախագահ Բա- կո Սահակյանը խոստացավ լուծել:

Դպրոցի շինարարական աշխատանքներն էլ առա- ջին հայացքից լավ են կատարված, շատ կարևոր է, որ օգտագործվել է տեղական քարը:

Նման կրթությամբ աշխատելու ու սովորելու ուղղա- կի երջանկություն է: Մնում է բարձր արդյունքներով պատասխանել այս ամենին, մասնավոր՝ որ հաջորդ տարին թունայնակալան է. մշտն էնք Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյանը: Բնականաբար, նրա անունը կրող դպրոցն առավել մեծ պատասխա- նատվությամբ պետք է նախապատրաստվի այս իրա- դարձությանը:

Հոկտեմբերի 4-ին Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստում ռեկտո- րի թափուր պաշտոնն զբաղեցնելու հա- մար հայտարարված մրցույթում ԱրՊՂ ռեկ- տոր ընտրվեց բանասիրական գիտություն- ների թեկնածու, ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար Արմեն Սարգս- յանը:

Ընտրությունից հետո լրագրող- ներին տված ճեպագրություն ԱրՊՂ նորընտիր ռեկտորը, ներկայացնելով համալսարանի զարգացման իր տես- լականը, ասաց.

- Ներկայացրել եմ իրատեսական ծրագիր: Նրանում ներառել եմ 10 ուղղություն. սկսել եմ ընդունելու- թյան կառավարումից, վերջացրել հավատարմագրման գործընթացով: Յուրաքանչյուր ուղղության գծով շա- րադրել եմ այն հիմնական դրույթնե- րը, որոնց գծով պետք է տարվեն աշ- խատանքները, օպտիմալացվի ըն- դունելության չափաբանակը՝ այն համապատասխանեցնելով աշխա- տաշուկայի պահանջներին, առաջին հեր- թին՝ ԱՀ տարբեր բնագավառների զարգա- յման մակարդակին: Շատ կարևոր են հա- մարում ուսանողների հետ տարվող աշխա- տանքներն ու որակյալ ծառայությունները և ենթակառուցվածքներում տասնյակ կե- տեր են մշել այդ ուղղություններով: Ուսա- նողը պետք է դիտվի որպես դասախոսի կրտսեր գործընկեր, իսկ ուսանողական խորհուրդը՝ ռեկտորատի և ռեկտորի անմի- ջական աջակից գործընկեր, որովհետև միայն համագործակցությամբ կարելի է հասնել որոշակի հաջողությունների:

Նորընտիր ռեկտորը մշեց, որ բոլորը շատ կարևոր ուղղություններ են և շեշտեց, որ գոյության շուրջ 50 տարվա ընթացքում ու հատկապես վերջին տարիներին ԱրՊՂ- ում ստեղծվել է այն նորարարական հիմքը, որի վրա հենվելով՝ հնարավոր կլինի ապահովել բուհի շարունակական զարգա- ցումը: «Արցախի պետական համալսարա- նի աջակցելու է ԱրՊՂ բարեփոխումների իրա- կանացմանը՝ դրանով իսկ ամրապնդելով մայր բուհի, կարգավիճակը: -Հոկտեմբերի 9-ին ԱՀ պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանի ուղեկցությամբ այցելեց Ար- ցախի մայր բուհ և պրոֆեսորադասախո- սական կազմին ներկայացրեց նորանշա- փակ ռեկտոր Արմեն Սարգսյանին:



Պետական նախարարը նախ շնորհակալություն հայտնեց ԱրՊՂ Մախկին ռեկտոր Մանուշ Մինասյա- նին՝ բեղմնավոր աշխատանքի հա- մար՝ մշտնապես հիմնադրաբար և մի շարք համարձակ որոշումների կայացման գործում: Շնորհավորե- լով նորանշանակ ռեկտոր Ա. Սարգս- յանին բուհի խորհրդի անդամների աջակցությունը ստանալու համար՝ պետնախարարը մշեց, որ կրթական համակարգում նրա ունեցած աշխա- տանքի մեծ փորձը կարևոր երաշ- խիք է մայր բուհի առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար: Նա բարձր գնահատեց ԱրՊՂ-ի դերը հանրապետու- թյան բարձրագույն կրթության զարգա- յման գործում և հայտնեց կառավարության աջակցությունը առկա մարտահրավերնե- րի հաղթահարման ճանապարհին:

Այնուհետև պետնախարարն այցելեց Ազգային վիճակագրական ծառայություն և աշխատակազմին ներկայացրեց հանրա- պետության նախագահի հրամանագրով կառույցի ղեկավար նշանակված Մանուշ Մինասյանին:

Այնուհետև պետնախարարն այցելեց Ազգային վիճակագրական ծառայություն և աշխատակազմին ներկայացրեց հանրա- պետության նախագահի հրամանագրով կառույցի ղեկավար նշանակված Մանուշ Մինասյանին:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԿՈՒՄ Է



Հոկտեմբերի 8-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նա- խարար Նարինե Աղաբալյանը ընդունեց «Դասավանդիր, Հա- յաստան» կրթական հիմնադրամի պատվիրակությանը՝ նրա հիմնադիր և ղեկավար Լարիսա Հովհաննիսյանի գլխավորու- թյամբ: Հանդիպման հիմնական նպատակը փոխըմբռնման հուշագրի վերաստորագրումն էր:

Ինչպես հայտնի է, «Դասավանդիր, Հայաստան» ծրագրի նպատակն է համալրել հեռավոր գյուղերի դպրոցների ուսուցիչ- ների թափուր տեղերը: Արդեն երկրորդ տարին է՝ ծրագիրը գոր- ժում է նաև Արցախում:

Ողջունելով հյուրերին՝ ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանն ասաց, որ հուշագրի վերաստորագրումով կհաստատեն իրենց պատրաստակամությունն ավելի ակտիվացնելու ջանքերն Ար- ցախի դպրոցներում ուսուցիչների համալրման ուղղությամբ: Եթե մինչև այս ուսումնական «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով Արցախում աշխատում էր 4 ուսուցիչ, ապա այս տարի նրանց միացել է ևս 13-ը: Նրանցից 10-ը համալրել են Քաշաթա- ղի շրջանի դպրոցները: Ն. Աղաբալյանը տեղեկացրեց, որ ընդ- հանրապես շատ լուրջ խնդիր է Արցախում, հատկապես գյուղա- կան փոքր, համակազմ դասարաններ ունեցող դպրոցներում ու- սուցիչների թափուր տեղերը համալրելը: Այս տարի շուրջ 500 թափուր տեղերի համար մրցույթ էր հայտարարվել, որից 250-ից ավելին՝ հենց Քաշաթաղի շրջանում: Դրանցից գոնե 10-ը հա- մալրվեց «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով: Ըստ նախա- րարի՝ ծրագրի շրջանակում պատրաստակամություն կա ավելի շատ ուսուցիչներ ներգրավել, պարզապես պետք է նաև հա- մայնքները շահագրգռվածություն ցուցաբերեն գործուղված ու- սուցիչների համար կենցաղային պայմաններ ստեղծելու գոր- ծում: Եվ թերևս հուշագրի վերաստորագրումով նախարարույնը նույնպես պարտավորվում է ստեղծել որոշակի պայմաններ ու անչափ շահագրգռված է, որ Արցախի դպրոցներում թափուր տեղերը համալրվեն այս ծրագրով, քանի որ «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով Արցախ եկած ուսուցիչները որակական փոփոխություն են մտցնում դասավանդման ոլորտում՝ իրենց հետ բերելով նոր մեթոդներ, ստեղծագործական մոտեցում, ինչը

շատ կարևոր է նոր սերնդի կրթության ապահովման գործում: Նախարարը շեշտեց, որ այն ուսուցիչները, ովքեր աշխատում են այս ծրագրով, որակական փոփոխություններ են մտցրել ոչ միայն դպրոցի, այլև համայնքի կյանքում: «Նաև այդ ակնկալի- քով ենք ընդլայնում մեր համագործակցությունը, որովհետև հայ- տարարել ենք, որ ամեն ինչ պիտի ամենք, և մեր ջանքերը պետք է ուղղված լինեն նրան, որ դպրոցը համայնքի կյանքում լուրջ դե- րակատարություն ունեցող կառույց լինի և մասնակցություն ու- նենա համայնքի զարգացման ծրագրերին, ու հենց ադ առաքե- լությունն իրականացնելու համար մեզ համար շատ կարևոր է «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի ուսուցիչների փոր- ծը»: Ն. Աղաբալյանը շնորհակալություն հայտնեց արդեն իսկ ձևավորված համագործակցության համար և հույս հայտնեց, որ այն առաջիկա տարիներին ավելի կակտիվանա, ու հնարավո- րություն կլինի Արցախի շրջաններ այս ծրագրով ուղեգրել նոր սերնդի ուսուցիչների:

«Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի հիմնադիր և ղե- կավար Լարիսա Հովհաննիսյանն ասաց, որ այս ծրագրով նպա- տակ ունեն ոչ միայն լրացնել ուսուցիչների պակասը, այլև ստեղ- ծել նոր նախագծեր, որոնք կբարձրացնեն կրթության մակար- դակը: Ըստ նրա՝ դրա համար ուղղակի ցանկություն է պետք, սեր և հույս, որպեսզի կարողանան արմատական փոփոխություններ մտցնել մեր կրթական համակարգում, և վստահեցրեց, որ որպես գործընկերներ, իրենց փորձով ոչ միայն կհսկվելու են արցախցի- ների հետ, այլև մեծ սիրով աշխատելու են նրանց տեսլականն առաջ տանելու:

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագ- րի գլխավոր տնօրեն Թեմի Ավագյանը հավելեց, որ մասնագետ- ներն ընդգրկվում են առաջնորդության զարգացման ծրագրում, ձեռք բերում շատ հմտություններ, որոնք իրենց պետք են ոչ մի- այն դպրոցում դասավանդելու, այլ նաև իրենց հետագա կարիե- րայի զարգացման համար: Տեղեկացրեց, որ ամեն ամիս հանդի- պում են ծրագրի մասնակիցների հետ, ունենում սեմինարներ, հրավիրում են հյուրերի, որպեսզի նրանց հետ աշխատեն և յու- րաքանչյուր մասնակցի կցում են անձ, որն անհատապես աշխա- տում է նրանց հետ, որպեսզի նրանք ոչ միայն կարողանան հա- ջողության հասնել դասարանում, այլև համայնքի զարգացման գործում:

Հիմնադրամի Արցախի տարածաշրջանային ղեկավար Արմեն Հովհաննիսյանի խոսքով՝ եթե նախորդ տարում գործուղված 4 ուսուցիչներն աշխատել են ամիջական 70 աշակերտի հետ, ապա այս տարվա ուսուցիչները՝ շուրջ 780:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության անունից հուշագիրն ստորագրեց Նարինե Աղաբալյանը, «Դասա- վանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի կողմից՝ նրա ղե- կավար Լարիսա Հովհաննիսյանը:

Հուշագիրը սահմանում է կողմերի գործընկերության բովան- դակությունն ու շրջանակն առաջիկա տարի տարիների համար: Հուշագրի ստորագրումից հետո համատեղ քննարկում ծա- վավեց Արցախի դպրոցներում ներառական կրթության խնդիր- ների շուրջ:

ԼՈՒՅՍԻ ՍԵՐԱՆԱՑԱՆՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉ, ԴՈՒ ՀՈՒՍԱՎԱՌ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՎԱԿԱՆ ՎԵՇՈՒԹՅՈՒՆ

Դարերի ակունքից է գալիս հայ դպրոցը: Մագաղաթաբարձի մեր մատյաններում գրված հայերեն գրեթե ոչ ոք չէր կարող հասնել միտքն ու արարման ուժը, քաջակորով հատկությունն ու ազնվագարն էությունը:

Արարչական տվյալները մեզ շնորհված հայոց գրեթե սերունդները վառեցին հոգու կերտները և հայ մնացին Աստուծոց պարզաված այս սրբազան հողում:

Ո՛վ եղավ հուսալուստ այն սրբությունը, որ հայապահպան դեր ստանձնելով, սերունդների հոգում սերմանեց ուսանելու բերկրանքը:

Ուսուցիչն է այդ վեճությունը, որի մեղմությամբ լցվում են սաները, սաստկությամբ՝ շտկվում, իմաստությամբ՝ բարձունքներ նվաճում, բարությանը՝ խանդավառվում, ժպիտով՝ թևավորվում, վեճությամբ՝ բարձրանում, խորությամբ՝ ակունքվում, հնաքով՝ տարվում, շիտակությամբ՝ շտկվում, առաջնորդությամբ՝ դառնում հետևորդ, ուսմունքով՝ կրթվում, առաքելությամբ՝ դառնում ջանադիր, սրբավարությամբ՝ ազդվում, կարգաբերվում ու բյուրեղանում...

Ուսուցիչ, ամեն խրատդ է լսողներից ապաքեն:

Սուր ու վահան՝ բալիկներիդ ապավեն, Ուժդ մտքիդ զինանոցն է, իսկ ակունքդ՝ լույս-մատուռ,

Ցուցանում ես սաներիդ՝ լինել ամուր, պինդուկուր,

Ի՞նչն է քո նպատակը՝ լինել ազգի սերմնացան,

Չիք այլ արժան մի անուն, քան Ուսուցիչ պատվական:

Ուսուցչապետ Մեծն Մաշտոց, դու պատգամեցիր լինել իմաստորեն ուժեղ, երբ երկիրը կիսված էր գործող տերությունների միջև: Եվ երբ պետականությունը գրեթե կործանված էր հասցված, դու խնդրեցիր ազգի ոգին, որ եղավ մի: Դրանով Աստված մեզ սատար կանգնեց. մենք ընկրկեցինք, բայց չընկանք օտար որոգայթների անդունդը:

Մենք գիր ու սրով դեմ կանգնեցինք բոլոր բարբարոսներին ու մեր երկիրը դարձրինք ցնցումներից պահեցինք:

Մաշտոց, քանի՞ սր քեզ աշակերտեցին, ու քանի՞ սր դարձան դպրապետներ այստեղ՝ Ամարասուև և ամենայն տեղ հայոց հողում: Ով պատմաբանեց, որ փոքր ածու լինելով, գրելու և հիշատակելու շատ գործեր ենք կատարել, կոչումով էր Պատմահայր՝ ցույց տալով հայոց ողջ ազգագրությունը ծագումնաբանությամբ: Ով պատմաբանեց հավատարի և հայրենյաց սխրամբը, կոչվեց Ոսկեբերան: Ով գրուցաբանեց հայրենի հողի գործության մասին, ի ցույց դրեց հող ու ջրի սրբությունը: Ով աստվածային լույսի հորդումը պատմաբանեց, կոչվեց Բարի Ավետաբեր:

Յետո սերունդները փոխմեփոխ կրթվեցին ոսկեղենիկ մայրենիով: Ոսկեղենիկ, այսօրվա՝ չափազանց լավ ու այնքան նվիրական, որ անգամ ոսկե տառեր ծուլեցինք, որ անգին է մեզ համար: Եվ ամեն մի նոր սերունդի շուրթերին նորովի է հնչում հայերենը, բայց անփոփոխ է այն սրբությունը, որ կոչվում է մետրապոլիտ հայրենյաց գիր:

Բոլոր դարերում դպրոցացն անվանել են վարդապետ, վարժապետ, դպրապետ, ուսուցիչ: Ի՞նչ և ինչպե՞ս է ուսուցանվում սանին, որ կենաց հացի պես դառնում է անհրաժեշտություն: Մեր սերտողությունը քաջությունն է, մեր ուխտը՝ հայրենյաց գործունեությունը, մեր հավատամքը՝ հայրենիքին ընծայվելը:

Ամեն օր ուսուցիչը դասարանին դիմելիս ասում է.

- Սիրելի՛ սաներ... Ու փոքրահասակ պատանի և արդեն հասունացող աշակերտները, մատաղ և հասուն մտքերը հավաքելով, իրենց անվարժ ու վարժ ձեռագրերով պատրաստվում են ոսկի բառեր գրելու՝ **հայրենիք, գիր, մայր, սրբություն...**

- Ուսուցիչ, դու գեղեցկին հաղորդակից ես դարձնում սաներին, ու նրանք արարում են նոր գեղեցկություններ, դու վեճաբար

նրանց հոգու մեջ հունդեր ես ցանում, նրանք առատ հունձիք բարիք են տալիս:

Քո խոսքը վեճ է, ուսուցողական, նրանցը՝ բողբոջական: Նրանց լավ արարքը խրատությունն է, ուսուցողական է ժրջան: Բարի օրինակ դու ես նրանց տալիս, նրանք հանրօգուտը բազմապատկում են:

Ահա թե ինչու հայոց տունը շեն է մնում, զի պաշտպանվում է հանընդհանուրով, և սահմանները մեր պահվում են անառիկ:

Քանի՞ ուսուցիչ է հայրենյաց սիրով նահատակ դարձել Մեծ գոյապայքարում, և քանի՞ ս են բյուր նրանց քաջությամբ քաջալերվել:

Մեր պատմությունը, տարածաշրջանը այլ են այլոցից: Մենք շրջապատված ենք մուսուլմանական պետություններով, բայց մեզ զորացնում է բիրլիական Արարատը, այստեղ՝ Արցախում, մեզ հայ պահողը Արցախականն է, և Շուշին անառիկ բարձունքից մատնանշում է, որ թշնամին դեռ հաշվի չի մտնում փաստի հետ, որ տիրջական իրավունքով ենք մեր երկրին տեր կանգնում:

Մեզ ուսանել են Վարդանի պես պինդ ու ամուր լինել՝ վասն հայրենյաց, վասն հավատո: Մենք ուսուցանում ենք մեզ ավանդվածը և շարունակում Մոնթեի պես լինել նվիրյալ, Բեկորի պես՝ ազգապահ, Ազգալոյանի պես՝ զաղափարագետ, Մկրտչյանի պես՝ նպատակասլաց, Աբաջյանի պես՝ աներկյուղ, Ուրֆայանի պես՝ կտրիճավայել և ուսուցանում ենք, հար ուսուցանում այսպես գոյապայքարել: Մենք ներարկում ենք կենաց դասերը շատ հիմունքներից, կենցաղավարությունից առավել և շատ:

Իսկ գիտության մեջ ձգտում ենք լինել անգիջում: Ո՞ր աշակերտը չի թևավորվում անհայտի լուծումը գտնելով: Ո՞ր քերականը չի ջատագովում իր սանին հայերենի իմացության մեջ հմտանալիս ու խորանալիս:

Գալիս է մի պահ, երբ աշակերտը գրեթե դառնում է ուսուցիչ «Որցակիցը», և ուսուցիչ սիրտը ծփում է, որ իր տքմանքը դառնում է արգասիք:

Այն, ինչ տալիս է ուսուցիչը աշակերտին, դառնում է վերջինիս անկողնապետի գանձը, զի աշխարհի հարստություններն են ձեռքից ձեռք անցնում, իսկ ինչ թափանցում է աշակերտի ինքնում մեջ, իրենն է ու իրենը:

Ուսուցիչը վաստակի ճոխությունը նայում է իր տեսանկյունից. անգամ թագավորների անուններն են մնում ստվերում, բայց ուսուցչի անունը մնում է սերունդների հոգում:

Պեղել պետք է կրթության ոլորտում հինը հայտնաբերելու, քանզի պեղում են հնաժողովը և բրածոներ: Դպրության ոլորտում մեր հինը մեր անկորնչելի հայոց գիրն է, որ 16 հարյուրամյակ մեր մատաղ սերունդի շուրթերին է՝ միշտ կենդանի և կենսաթթվաբույր:

Մենք ավելի ենք խորացնում մեր կենսական գիտելիքները, հայտնագործում նորանոր գիտություններ, սակայն քաջ գիտենք՝ ամեն ինչ սկսվում է դպրոցությունից:

Լավ ուսուցիչ մոտ քարը դառնում է քանդակ, վրձինը՝ կտավ, ամեն մի ստեղծող՝ մի համանվագ, ամեն մի թիվը՝ ճշգրիտ հաշվում կամ պատմության վկա, ամեն մի տաղը՝ հայրենապատում, ամեն մի տողը՝ խոր իմաստություն. չէ՞ որ պարունակությամբ է չափվում գործի իսկությունն ու մեծությունը: Եվ այդ ամենի ուսուցանողը ուսուցիչն է:

Եվ ուսուցանող այդ էակին ուղղվում են քանի՞ հայացքներ, որոնք նա կարող է որպես հոգու գիրք: Ամեն մի սան մի թերթ մաքուր, ուր գրվում են իր ու սանի ընթերցումը, ջանքը, նվիրումը...

Ուսուցիչ, քեզ տրված է անսահմանելի մեծությունը՝ մտքի թռիչքը, ճախարանից բերել ի մատուց սաների, որ իրենք էլ ուսանեն սավանել՝ անհունների անչափելիությունը կշռությամբորելու..., քանզի լավ գիտենք՝ կյանքը անդադար հոսանքի մեջ է, և թե մի կարճ պահ անգամ զգոնությունը մենք կորցնենք, թշնամին նորից կխուժի սահմանը, և նորից քանի՞ սր կհերոսանան... Իսկ մենք լավ գիտենք, որ դառնադետ է այն մեղալների ցավագին շքերթը, որ շնորհվում են ար-

դեն հետմահու...

Դարերի դպրության քարտեզի վրա երևում է, որ մեր բոլոր ակնառու մանկավարժներն էլ բյուր դժվարություններ են հաղթահարել, որ իրենց ձեռքբերումները նախ՝ հաստատվեն, այնուհետ և՛ սերունդների կրթեն ու փոխանցեն:

Որքան շատ են նրանք՝ հայ անվանի մանկավարժները պատվարժան՝ սկսած Ոսկեդարի դպիրներից մինչև մերօրյա առաքյալները մանկավարժության:

Այսօր, մանկավարժի պատասխանատվությամբ նվիրաբերվելով սերունդների կրթության վեճ գործին, յուրաքանչյուրս զգում ենք պատասխանատվության այն զգացումը, որով պարտական ենք հայրենիքի և սերունդների առջև:

Ուսուցիչը, սերունդների ուղին լուսավորող նվիրյալը, թո՛ղ դարձյալ լինի լուսատու ջահ և փարոսի այն ճանապարհը, որով անցնում են սերունդները, քանզի գոյապահպանության վեճ ու դժվարին ուղին անցնում է լուսավորության ուղեկցությամբ, որի ներքո կրթվում են սերունդները:

Դպրության հարուստ փորձում իրենց արժանի ավանդ ունեցող հայ մանկավարժները դաստիարակում են մանուկներին ազգային ոգով, քաջասրտությամբ, մարդասիրությամբ, հերոսականությամբ:

Կապրի, հավետ կապրի այն ազգը, ով լուսավորված է գիտության դպրությամբ:

Կեցցե՛ն դպրության գործի նվիրյալները, որոնց ձեռքի տակ աճում են հայրենիքի այսօրն ու ապագան կերտող անվեհեր զինվորներ ու քաջասրտությամբ, մարդասիրությամբ գիտնականներ և կենսական ոլորտի ամենապատասխանատու մասնագետներ: Չթվա, թե մաքրարարությունը պարզ արիտետ է, իսկ դարբնի՞նը, հացթուփի՞նը. չէ՞ որ հասարակությանն օգտակարը պատվական է:

Պատվար լինենք գիտելիքների սերմանման հարուստ զինամոցին այնպես, որ հունձը ազգի հնձանում ծողովվի:

Դաստիարակենք ազգասեր և ո՛չ օտարասեր սերունդ: Մենք մեր ազգային տունն ենք կառուցում: Լինենք որոնադիրները հայրենապաշտպանության ամրոցի, որ հայությունը հզոր հայրենիք ունենա: Անդաստանվի հայոց հունձը, և ամեն ընտանիք զգա լիության շունչը:

Լինենք ինքնիշխանության բաղձալի շուրթերը և որևէ գերտերության հովանավորության կարիք չունենանք:

Ազգը հարուստ է իր մտքի հանճարներով: Լինենք հնուտ գործարողները հանճարների ավանդների և ստեղծենք այն ավետյաց երկիրը, որում չլինեն անհամաչափություն, բևեռացում, խաղաղության խաթարում:

Եվ հայոց պատմությունը հարստացնելով՝ բազմապատկենք հաղթանակները՝ Արցախի 30-ամյակի կողքին դնելով վերամիավորումը մայր հայրենիքին, Հայաստանի 100-ամյակի կողքին՝ անասանությունը հայոց երկրի և քաղաքամայր Երեբունի-Երևանի 2800-ամյակը հասցնենք 3 և ավելի հազարամյակների՝ հավերժության դափնիներով օծված:

Ունենք հաղթանակած հայրենիք, ունենք ազգային դպրություն, ուրեմն ունենք և հարատևություն:

Փա՛րք Ուսուցիչն, որ օժտված է կրթելու գործությամբ, և զինվորը արի է, սահմանը՝ ամուր, երկիրը՝ շենացող, սերունդը՝ կորովի ու կիրթ...

Փա՛րք Ուսուցիչն, որի քանքարով կրթված, հասակ են առնում հայրենյաց զինանոցի բոլոր շերտերը՝ մշակից մինչև տիեզերանավորը...

Ուսուցիչ, դու արժանի ես մեծարանքների՝ անանց քո վաստակի համար:

Շնորհավոր տոնդ, մեծարգո՛ Ուսուցիչ:

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան միջն. հոսքային դպրոցի հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք
ՂԵՎԱՎԱՐԻ ՉԻՐԲՈՎ,
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀՍՏՈՒԹՅԱՄԲ



Ա ն հ ա տ ն ց երկան, որոնց համար մանկավարժի մասնագիտությունը կարծես վերուստ տրված շնորհ է: Ազգանվեր և սուրբ առաքելություն է լինել լավ մանկավարժ, մատաղ սերունդին ուղղորդել լիարժեք կրթության,

ազգապահպան գործի հաղթանակին:

Այս խոսքերը խիստ բնութագրական են մեր հարգարժան տնօրեն Սլավա Գրիգորյանին:

Ծնվել է 1953 թվականի հոկտեմբերի 3-ին Աստղաշեն գյուղում (նախկինում՝ Դաշբուլաղ):

1961-1968թթ. սովորել է Դաշբուլաղի ութամյա դպրոցում:

1968-1970թթ. սովորել է ավարտել է Պատարայի միջնակարգ դպրոցը:

1970-1974թթ. բարձր առաջադիմությամբ ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը և անմիջապես աշխատանքի է ընդունվել Դահիավի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, որտեղ աշխատել է մինչև 1986 թվականը:

1986-1988թթ. աշխատել է Աստղաշենի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի, մաթեմատիկայի ուսուցիչ, նաև՝ հայկական սեկտորի ուսմասվար:

1988թ. սեպտեմբերի 6-ին ընտրվել է Դաշբուլաղի «Հոկտեմբեր» կոլտնտեսության վարչության նախագահ, իսկ 1998-ին՝ Աստղաշեն համայնքի ղեկավար և աշխատել մինչև 2007թ. հոկտեմբեր:

2008թ. սեպտեմբերի 1-ից նշանակվել է Աստղաշենի ժամ Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն և աշխատում է առայսօր:

Իր մասնագիտությանն ու դպրոցին նվիրված ուսուցիչ-տնօրենը բոլորեց իր քաջամեծագ կյանքի 65-ամյակը:

Նվիրվածությունն ու անսպառ սեր դեպի սաները, հարգանքն ու կարգապահությունը, խստապահանջությունն ու հոգատար վերաբերմունքը կոլեկտիվի անդամների ու դպրոցի նկատմամբ. սիս նրա երջանի ճշգրիտ արտացոլանքը:

Որպես տնօրեն՝ Սլավա Գրիգորյանը լավ է տիրապետում դպրոցավարությանը, վստահված գործի նկատմամբ ունի պատասխանատվության մեծ զգացում:

Որպես ուսուցիչ՝ գերազանց տիրապետում է մաթեմատիկային և այն հետաքրքիր հնարներով ու մեթոդներով մատուցում սաներին: Թվերի մոգական աշխարհը նրա տարերքն է: Նա որակվում է որպես մաթեմատիկա առարկայի խոր գիտակ, ու այդ սիրով նրան հաջողվում է իր սաներին տանել դեպի մաթեմատիկայի բարդ ու հետաքրքիր աշխարհ:

Նրա համար չկա լավ ու վատ աշակերտ, յուրաքանչյուրի մեջ ձգտում է տեսնել միայն ազնիվը, մաքուրը: Ահա թե ինչու նա արժանանում է ամենաբարձր գնահատականին՝ իր սաների սիրուն ու հարգանքին:

Ս. Գրիգորյանը մարդկանց հետ աշխատելու յուրօրինակ հմտությամբ, բարձր կուլտուրայով, խստապահանջությամբ դպրոցում ստեղծել է մանկավարժական ու աշակերտական համերաշխ կոլեկտիվներ:

Մեզ մնում է միայն ասել.

- Սիրելի՛ տնօրեն, շնորհավոր 65-ամյակդ, Ձեզ՝ առողջությամբ, հաջողությամբ, բարեկեցիկ կյանք և անսպառ եռանդ:

Աստղաշենի ժամ Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՊԱՏՊԱՍ

ԲԱՐՁՐ ՊԱՆԵՔ ՈՒՍՈՒՑՉԻ ԱԶՆԻՎ ԱՆՈՒՆԸ

Հայ ժողովրդի սերը, ակնածանքն ու ջերմ վերաբերմունքն ուսուցչի մասնագիտության հանդեպ գալիս է դարերի խորքից: Մեր երկրում այսօր հարյուրավոր մանկավարժներ հպարտությամբ և պատվով են կրում իրենց փոխանցված ուսուցչի վեհ կոչումը: Նրանք իրականացնում են դժվարին և պատասխանատու առաքելություն՝ ուսուցանում և դաստիարակում են նորանոր սերունդներ: Անձնվիրաբար կերտում են մեր երկրի ապագա քաղաքացուն՝ նրա մեջ սերմանելով սեր դեպի կրթություն, ընտանիք և հայրենիք:

Ուսուցչի մասնագիտական տոնն իսկական առիթ է՝ շնորհավորելու բոլոր ուսուցիչներին, մաղթելու նրանց անսպառ եռանդ, ստեղծագործական վերելքներ ու նորանոր հաջողություններ: Մեզանից յուրաքանչյուրը զննատուր և մեծարում է այդ սուրբ առաքելությունն անխոնջ իրենց ուսերին կրող ուսուցիչներին:

Առանձնակի հարգանք տածելով մեր թոշակառու ուսուցիչների հանդեպ՝ նրանց ցանկանանք առողջություն, թող նրանց մասնագիտական տոնը պատվի միայն ժպիտներով ու աշնանային բուրումնավետ ծաղիկներով:

Իսկ գիտե՞ք որքան ծանր ու դժվար է հեռանալ սիրելի աշակերտներից և հարազատ դպրոցից, սակայն մեր թոշակառու ուսուցիչներն ընթանումով են մոտենում դրան՝ գիտակցելով սերնդափոխության անհրաժեշտությունը: Նրանք հավատացած են, որ նոր հերթափոխն ավելի մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով կշարունակի ավագ սերնդի գործը: Մեր թոշակառուները պատրաստակամ են խորհուրդներ տալու և օգնելու երիտասարդ ուսուցիչներին:

Ասկերանի շրջանի մի խումբ վաստակաշատ ուսուցիչներ ցանկացել են թերթի միջոցով իրենց պատգամները հղել երիտասարդ ու սկսնակ ուսուցիչներին:

Էլենուրա ՀՈՎԱԵՓՅԱՆ, Պատարայի միջնակարգ դպրոցի թոշակառու ուսուցչուհի:

- Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն ենթադրում է որոշակի պահանջներ: Դրանք են՝ մասնագիտական բարձր վարպետություն, գիտելիքների և հմտությունների գործածման կարողություն: Մի հին և իմաստուն ասացվածք կա՝ ուսուցիչն է ստեղծում ազգը:

Այս իմաստությունն այժմեական է նաև մեր օրերում: Այն իր մեջ խտացնում է ուսուցչի աշխատանքի սոցիալական ու մարդասիրական ողջ իմաստը:

Ուսուցիչը պետք է լինի քաղաքավարի, ճկուն, հետաքրքրասեր, մարդկային, հմտորեն տիրապետի բանավոր խոսքին, ունենա գրագետ և պարզ արտահայտվելու ունակություն, ուրիշին լսելու կարողություն:

Ուսուցիչը պետք է ունենա բարձր աշխատունակություն, կարողանա դիմադրել բացասական ազդակներին, մշտապես լինի ակտիվ և առույգ: Նա պիտի լինի զուսպ, ցուցաբերի հավասարակշռություն, տարբերվի մտքերի արտահայտիչ շարադրմամբ:

Ուսուցչի դպրոց՝ պահպանելու ուսուցչի բարձր ու պատվավոր կոչումը: Հիշե՛ք, սովորողների անձը ձևավորվում է ուսուցչի անձի օրինակով: Թող ձեր հայրենասիրությունը, աշխատանքի նկատմամբ ձեր վերաբերմունքը, մարդու և քաղաքացու ձեր դեմքն արժանի լինեն օրինակելու համար: Հարգե՛ք ձեր աշակերտի անձը, մոտ եղե՛ք նրան:

Հաճախե՛ք փորձառու ուսուցիչների դասերին և տեսե՛ք, թե ինչպես են նրանք շփվում երեխաների հետ, ինչպես են լսում երեխաներին, ինչպես են մտում, քայլում դասարանում: Առիթ փնտրե՛ք երեխային գովելու, եթե նա դժվար դաստիարակվող է: Հասե՛ք նրան, որ երեխան հավատա իր ուժերին ու հնարավորություններին:

Դաստիարակե՛ք ձեր սովորողների մեջ քաղաքացիական բարձր զգացմունքներ, հարգանք դեպի աշխատանքն ու մարդը, սեր Հայրենիքի նկատմամբ:

Հաջողություն ձեզ ձեր ընտրած դժվարին, բայց միևնույն ժամանակ պատվաբեր գործում:

Վլադիմիր ԲԱՐՍԵՂՅԱՆ, Խնածախի Արմեն Ավագյանի անվան միջնակարգ դպրոցի նախկին զինղեկ:

- Ես ուսուցիչ եմ: Կարծեմ դրանով ամեն ինչ ասացի: Ուսուցիչ եմ եղել նաև այն ժամանակ, երբ զինվորական ծանր ուղեպայուսակն ուներին՝ իմ զինվորներ-

ին սովորեցնում էի թշնամուց աննկատ, սողեսող անցնել թիրախը, որովհետև կա գոյապայքարի հիմնական մի օրենք՝ կամ դու, կամ՝ թեգ...

Ընդգրկվեցի Երկրապահների միության մեջ՝ իմ հայրենիքին անմնացորդ նվիրվելու կամքով, իմ փորձը եկող սերունդին փոխանցելու վեհ առաքելությամբ: Ես դարձա հայրենիքի մի մասնիկը և հասկացա, որ հայրենիքն ունի իմ կարիքը, և ինձ համար դա դպրոցն էր:

Խնածախի Ա.Ավագյանի անվան միջնակարգ դպրոցն ինձ՝ իր նախկին սանին, գրկաբաց ընդունեց: Նայում էի աշակերտներին հուզառատ դեմքերին և հասկանում, թե ինչքան բան կա անելու: Ես կարողացա երեխաների մեջ կոպելի իսկական զինվորի ոգին:

Երիտասարդ սերնդին կմաղթեի սիրելի հայրենիքը, իսկ հայրենիքը մեր համայնքն է, մեր դպրոցը, մեր տունը և սահմանում կանգնած մեր զինվորը: Սիրելի աշակերտին անշահախնդրորեն, զինել նրան մնայուն գիտելիքներով: Մեծարել ու գնահատել տարեց ու փորձառու ուսուցիչներին:

Սենորա ՍՈՂՈՍՏՆՅԱՆ, Միրա ՍԱՐԳՍՅԱՆ, Ռազմիկ ԱՎԱԳՅԱՆ, Հարավի միջնակարգ դպրոցի թոշակառու ուսուցիչներ:

- Ասում են՝ ուսուցչի կատարած աշխատանքն առաքելություն է: Դա մարդկանց արտերում կատարելության, սովորելու, կրակ վառելու մի հրաշալի հատկություն է: Եվ այդ առաքելության բնույթն աստվածային է հայերի համար, որովհետև երբ ասում ենք ուսուցիչ, մեր աչքի առջև անմիջապես Մեսրոպ Մաշտոցն է գալիս: Ամեն ուսուցիչ պետք է աշխատի նմանվել նրան:

Բայց մենք ուսուցիչ ենք կոչում նաև Հիսուս Քրիստոսին, այսինքն՝ ուսուցիչը երկրի վրա Աստծո թարգմանն է, նրա ներկայացուցիչը: Նա աստվածային գործ է կատարում, որովհետև մարդու հոգեկերտումն արարման մի գործընթաց է:

Դպրոց մտնող սիրելի՛ ուսուցիչներ, ձեր առջև բացվում է բազում անակնկալներով, դժվարություններով, ինչու չէ, նաև հիասթափություններով լի մի աշխարհ՝ բացելով ինքնադրսևորման մի նոր ասպարեզ:

Չվախենա՛ք, եղե՛ք վճռական, նպատակալաց և ամենակարևորը՝ համբերատար:

Թող ժպիտն անպակաս լինի ձեր դեմքից, ձեզ միշտ ուղեկցեն լավատեսությունն ու պատասխանատվությունը, միշտ լինե՛ք բարձունքում, ինչպես վայել է

հայ ուսուցչին:

Եղե՛ք ազնիվ, վեհանձն, բարի, անաչառ, խոհուն, շրջահայաց և մարդասեր:

Դպրոց տանող ձեր ամեն մի առավուրդ ժպտացող արևի ջերմ ճառագայթներով թող առեցուն լինի՝ ուրախության հոգեթով ակնթարթներով համակված: Բոլոր դժվարությունները հաղթահարե՛ք արժանապատիվ պայքարով, եղե՛ք նվիրված ուսուցչի վսեմ գործին, և հաջողությունն ու բարեկեցությունը ձեր մշտական ուղեկիցը կլինեն:

Գիտե՛ք, դուք բարձր եք պահելու ուսուցչի ազնիվ անունը:

Ուսուցչի իմաստալից ու գեղեցիկ տոնին մաղթում ենք խաղաղ երկինք, իղձերի իրականացում: Թող հաջողություններն ուղեկցեն ձեզ հետագա բոլոր ձեր նախաձեռնություններում:

Լաուրա ՇԱՀԲԱԶՅԱՆ, Նորագյուղի Վիտայի Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի թոշակառու ուսուցչուհի:

- Նորագյուղի միջնակարգ դպրոցում աշխատել եմ 44 տարի, այժմ թոշակառու ուսուցչուհի եմ: Այսօր ինչքան էլ մենք խոսենք նորագույն տեխնոլոգիաների մասին, վերջին հաշվով ուսումնական գործընթացը կախված է նրանից, թե ինչքան է պատրաստ ուսուցիչը և ինչպես է իր իմացածը մատուցում աշակերտներին: Ուսուցիչը պետք է համագործակցի աշակերտների հետ, նրանց հետ փնտրի իրականը, կարողանա հետաքրքրություն և զարմանք առաջացնել նրանց մոտ:

Մտնելով դասարան՝ ուսուցիչը պետք է այնպես անի, որ դասը դառնա ավելի ցանկալի, չնմանվի նախորդին, և աշակերտին սպասումներով լցնի վաղվա դասի հանդեպ: Նա պետք է գրավի աշակերտին ոչ թե իր արտաքին տեսքով, այլ ստեղծագործական հնարքով, որն աշակերտներին անմիջապես կներգրավի համատեղ աշխատանքում:

Շատ կցանկանայի երիտասարդ ուսուցիչներին խորհուրդ տալ աշակերտների առաջ դնել բուն նպատակներ և նրանց հայացքներն ուղղել դեպի բարձր ձեռքբերումներ: Աշակերտների հետ պետք է կիսել նրանց հաջողությունները, ուրախանալ ու ոգևորվել նրանց հետ:

Լավ մանկավարժը պետք է ունենա շքալ սիրտ, լինի համբերատար և հավատարիմ իր աշխատանքին: Ուսուցչի մասնագիտությունն իր մեջ կրում է իմաստություն և հոգու ջահելություն, բարություն և խստություն:

Ձեր դժվարին աշխատանքը թող ձեզ բերի միայն ուրախ և բերքատու պտուղներ: Ձեր ամենօրյա ճանապարհը դեպի մատաղ սերնդի սիրտը և գիտության բարձունքները տանող ճանապարհն է:

Թող ձեր աշխատանքն արդյունավետ լինի, իսկ ձեր աշակերտները՝ աշխատասեր և նպատակալաց, որոնցով կկարողանաք հպարտանալ դուք:

Արդարև, մեր թոշակառու ուսուցիչները բազում խորհուրդներ տվեցին երիտասարդ ուսուցիչներին: Կարծում են՝ սրտից բխող նրանց օգտակար խոսքերը կորոշվեն երիտասարդ մասնագետների սրտերում, և նրանք կառաջնորդվեն փորձառու, հարգված ու սիրված մեր թոշակառուների խորհուրդներով: Չէ՞ որ բոլորի նպատակը մեկն է՝ կրթել ու դաստիարակել Արցախ աշխարհին արժանավայել սերունդներ, նրանց վստահել մեր երկրի ապագան:

Կարինե ԲԱՆՇԻՅԱՆ

ՄԱՍ ԲԱՐՈՎ, ԴՊՐՈ՛Յ



Այն օջախը, ուր ոտք ես դնում առաջին անգամ, ուր ոտքից զլուխ հանելի դող ես զգում, ուր սիրտդ թրթռում է, ու քիչ է մնում հուզմունքից լաց լինես ու թո ողջ երջանկության աղբյուրն ես համարում, ուր անց ես կացնում կյանքիդ լավագույն տարիները, դժվար է հրաժեշտ տալ, դժվար է բաժանվել ու ետ չնայել: Բաժանվել, հեռանալ...

Հեռանալ առանց ետ նայելու, հեռանալ սրտի թրթռով, այս անգամ ոչ թե առաջին անգամվա ուրախ թրթռով, այլ մտածկոտ, թախծոտ, տխուր ու գուցե... հուսահատ:

Այս ե՞րբ անցան: Ես չնկատեցի, քանզի ոչ մի անգամ ետ չնայեցի, իսկ երբ միշտ առաջ ես նայում, երբեք չես հաշվում անցնող տարիները ու... Ու մեկ էլ տեսնում ես ոտքդ դրել ես մի վերջակետի, որից այն կողմ սկսվում է մի նոր սկիզբ, որին ոչ մի մարդ չի ուզում հանդիպել:

Տարիներ, տարիներ, որոնք ինձ անդավաճան ընկերներ, որոնք ինձ միայն երջանկություն են բերել, պարտքի զգացում, աշխատանք ու մեկ էլ... Մանկանց մաքուր, մաքուր հայացք անկեղծ ժպիտ, կարկաչուն ծիծաղ ու անմեղություն:

Տարիներ, տարիներ, որոնք ինձ տվեցին հոգու հարստություն, ուրիշի երեխաների մեջ տեսնելու քունը, հարագատը, անփոխարինելի, առանց որոնց ես չկամ:

Այս ե՞րբ անցան: Թվում է՝ երեկ էր: Առաջին անգամ, առաջին դասարան:

Հայացքս հանդիպեց նրանց անմեղ ու սպասողական հայացքին, մի պահ տիրեց լռություն... ու ետ արեցի առաջին քայլը:

Սկսվեց մի սրտանոտ գրույց, ծանոթացում, մտերմության քայլեր, փոխադարձ սեր ու մոտեցում, ինչը և կայեց մեզ անխախտելի կապերով:

Կա՞ն, արդյոք, բառեր, որոնք կնկարագրեն փոքրիկ եակների՝ մանկանց ներքնաշխարհը, անմեղ ու հետաքրքրասեր հայացքը, մեղրից բաղր ժպիտը, հոգու մաքրությունը, երբեմն թթուլախոս, երբեմն էլ ճարտար ու համարձակ խոսքը:

Կա՞ն, արդյոք, բառեր, որոնք կարող են դուրս քաշել մանկանց երկչոտությունը, փոխարենը տալ վստահություն, սեր աշխատանքի և ուսման նկատմամբ, սեր դեպի ուսուցչին ու իր նման մանուկները, տալ ընկերասիրություն:

Այս երբ անցան... Մանկանց հետ մոռանում էի, որ ես մեծ եմ, որ նրանք իմ արյունը չեն. իմ երեխաները չեն, որ ես միայն աշխատում եմ:

Ընդհակառակը, նայելով նրանց անմեղ ու պարզ աչքերին՝ հասկանում էի՝ ոչ միայն ուսուցիչ եմ, այլ նաև նրանց մի մասը, նրանց շատ մոտ հարազատը:

Այս երբ անցան... Թվում է՝ երեկ էր, երբ ստացա առաջին ծաղկեփունջը՝ երեխայի նուրբ ու քնքուշ փոքրիկ ձեռքերից՝ շաղախված նրա անկեղծ մանկական ժպիտով, ասես շուրջս դարձավ ծաղկած բուրաստան, ու ես ինձ զգացի աշխարհի ամենաերջանիկը, ով կարող է ամտեսել բոլոր խոշորությունները, ով ուժեղ է և այդ ուժն ստանում է մանկան աչքերից ու անկեղծ ժպիտից:

Ե՞րբ շահեցի երեխայի սերն ու վստահությունը, նրա առաջ բացեցի մի ողջ աշխարհ, այդ աշխարհը տանող ուսկեսալ ճանապարհը և առաջին քայլերը:

Մատչելի ու հետաքրքիր գրույցից հետո ցուցադրեցի Մեսրոպ Մաշտոցի մեծադիր նկարը, մեր ոսկետառ այբուբենը և «Ա» տառը:

Ու դրեցի մի սկիզբ, որը վերջ չի ունենալու:

Սկիզբ, որը վերջ չի ունենալու, այն հավերժ է, անվերջանալի, ցմահ:

Չեմ ուզում նշել, թե քանի անմեղ ու անկեղծ աչուկներ են դրոշմվել իմ սրտում ու հոգում, քանի՞-քանի մանկական անուշ հայացք ու քաղցրաթրթռ ժպիտ մնացել իմ կյանքի՝ դպրոցական կյանքի ճանապարհին, ինձ մոռացնել տվել առօրյա հոգսերն ու ցավերը:

Որ մեկը նշեմ, որ մեկը հիշեմ...

Մաներս մեկը մեկի հետևից հասակ առնելով, մեծանալով հրաժեշտ են տալիս դպրոցին, ուսումը շարունակում իրենց ընտրած բուհում, դառնում մասնագետ ու նվիրվում հայրենիքին:

Նրանք՝ սաներս, երբեք չմոռացան, և ընդհանրապես չկար մեկը, որ հանդիպելիս չդառնար նույն սառն, չհիշեր ու չվերապրեր այն բոլոր հիշարժան դեպքերն ու հիշարժան դասաժամերը: Ինձ զրկած չարտասաներ իր այն խոսքերը, որոնք հիշեցնում էին դպրոցական հանդեսները:

Քաղցր հիշողություններ...

ՎԱՍՏԱԿ ԵՎ ՊԱՏԻՎ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՄԱՆՈՒՆՉ ՈՒ ՎԱՄՔԱՅԼ

ԹՈՂԵԼ Է ԼՈՒՍԱՎՈՐ ՎԵՏԱԳԻԾ



Դուք անա- նուն՝ Չեր սաներն անվանի...

Այս ուսումնա- կանում Ասկերա- նի էդոնն Բար- սեդյանի անվան միջնակարգ դպ- րոցի վաստա- կաշատ մանկա- վարժներ էդիկ Գաբրիելյանն ու Սիլվա Ջհանգիր- յանը հասան մանկավարժական գործունեու- թյան եզրագծին՝ պատվախնդրորեն կատարե- լով իրենց առաքելությունը՝ ուսուցչի աշխա- տանքը: Դասավանդման արվեստին տիրապե- տող վարպետներին մեծարելու լավ առիթ է մասնագիտական տոնը՝ Ուսուցչի օրը:

Սատաղ սերնդի ուսուցչան ու դաստիա- րակության անմնացորդ նվիրյալ Սիլվա Ջհան- գիրյանը ծնվել է 1954թ. հուլիսի 27-ին Ասկե- րանի շրջանի Ներքին Սզնեք գյուղում: Հայ- րենի գյուղի ութամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրո- ցում: Գերազանցությամբ ավարտելով այն՝ 1971-75թթ. սովորել է Ստեփանակերտի ման- կավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետում և ավարտել գե- րազանցության դիպլոմով:

մտավորականի հայրենամկեր կեցվածքն ան- բողջացնում են նրա կրակոտ կերպարը: Տարի- ների ընթացքում նրա պահանջկոտությունն ու եռանդը չնարեցին: Ա. Ջհանգիրյանի մոտ «գե- րազանց» ստանալը սովորական աշակերտի համար առնվազն հերոսացում կարելի է հա- մարել:

Չոկուն է ու շտկուն, մաքրում է ու ավելաց- նում, կոփում է ու սովորեցնում, կաթիլ-կաթիլ ավելացնում է չարենցյան իր ոգու բոլոր կար- միրները, մինչև հասնում է ցանկալի նպատա- կին: Հպարտությամբ պետք է նշեն, որ մեր հա- մատեղ աշխատելու ընթացքում չեն կարող հի- շել տարի, երբ ընկեր Ջհանգիրյանը չարժանա- նար պատվոգրի օլիմպիադայաներում ցուցաբե- րած արդյունքների համար:


Ա.Ջհանգիրյան մտավորականի կյանքի կարգախոսն է՝ «Պայքար ճշմարտի ու գեղե- ցիկի համար»: Նա ոչ միայն գիտի բոլոր բառե- րի բառակազմությունը, բացատրությունը, հո- մանիշներն ու հակահիշները, այլև գիտի արժե- քը յուրաքանչյուր բառի: Նրա կիրք ինքնուրա- ղը խորք են սուտն ու դավաճանությունը:

Լավատես մանկավարժը քայլում է ժամա- նակի պահանջներին համահունչ ու համաբայլ: Դրա համար էլ նրա աշխատանքն ու գործունե- ությունը միշտ եղել են ուշադրության ներքո: Ար- ժանացել է բազմաթիվ պատվոգրերի, մրցա- նակների, գնահատանքի: Բայց ամենամեծ պարզևն իր աշակերտների անթաքույց սերն ու հարգանքն են:

Ա. Ջհանգիրյանը մասնակցել է «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթներին և արժանացել պարգևնե- րի ու մրցանակների ԿԿՍ նախարարության, Աս- կերանի շրջանային կրթության բաժնի և դպրո- ցի տնօրինության կողմից, պարգևատրվել է ԱՀ վարչապետի մեդալով: Մանկավարժական գոր- ծունեության հետ միասին ակտիվ հասարակա- կան կյանքով է ապրել: Եղել է շրջանային ար- հեստակցական միության անդամ, դպրոցի ար- հեստակցական միության նախագահը, Աս- կերանի քաղաքապետարանի ավագանու ան- դամ, Ասկերանի կրթության բաժնի արտահաս- տիքային տեսուչ, վիճահարույց պահերին՝ ար- դարամիտ միջնորդ:

Խիղճը, հարգանքը, պատիվը չեն գնում, ոչ էլ վաճառվում են, ոչ էլ ժառանգություն ստա- նում: Դրանք ձեռք են բերում քրտնաջան, ամե- ճօրյա գործունեությամբ:

Սիլվա Ջհանգիրյանի նման արժանավայել մանկավարժների կարիքը միշտ էլ ունեն և դպ- րոցը, և՛ հասարակությունը:



Ուսու- ցիչ, որը պատաս- խանատու է իր կատա- րած աշ- խատանքի որակի ու արդյունքի համար: Բայց միայն այս նախա- դասությու- նը բավա- կան չէ՝ ներկայացնելու էդիկ Գաբրիելյան ուսուցչի արժանապատվությունը, մաս- նագիտական պատիվն ու կոչումը: Մեր դպրոցներում միշտ եղել է ու կա տղա- մարդ ուսուցչի ներքին պահանջը: Եթե ու- զում եք իմանալ, թե ինչպիսին պետք է լի- նի տղամարդ ուսուցիչը, ներկայացնեմ ֆիզիկայի լավագույն մասնագետ, շախ- մատի գրոսմայստեր էդիկ Գաբրիելյանին:

Ծնվել է 1952թ. Ասկերանի շրջանի Քարազուխ գյուղում: Սովորել է Ասկերա- նի ութամյա, ապա՝ Խանաբաղի միջնա- կարգ դպրոցներում: 1970-74թթ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժինը: Աշխա- տանքային գործունեությունը սկսել է Իջևանի շրջանի Թալայի միջնակարգ դպրոցում: 1979թ. աշխատանքի է անցել «Գիտելիք» ընկերությունում, ապա՝ շրջ- կոնի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում: Բայց է.Գաբրիելյանի համար հարագատ միջավայրը դպրոցն էր՝ կեն- սախիմո առօրյայով: 1983 -2018թթ. աշ- խատել է Ասկերանի միջնակարգ դպրո- ցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ, արտա- դասարանական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ապա՝ ուսմասվար, վերջին տարիներին աշխատել է ամենա- փոքրերի հետ՝ դասավանդելով շախմատ: Իր արդյունավետ, արգասաբեր աշ- խատանքով նպաստել է սովորողների մեջ դրական, որակյալ արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը: Անաչառ ու անկողմնակալ է գնահատման մեջ: Իրարից չէր անցատում կրթելն ու դաս- տիարակելը: Իմ ուսումնառության տա- րիներին ֆիզիկայի հասկացությունները համեմվում էին այսպիսի օրինակներով. պատկերացրեք բորչը եռում է, կամաց- կամաց գույնը կարմրում է, նշանակում է՝

դիֆուզիան գնաց...», կամ զուգահեռ միացումները բացատրում էր լրբու շար- քերի վրա:

Խաղողաբաղի ժամանակ նրա երկար հասակը երևում էր ամեն շարքից, ուստի հեշտությամբ չէինք ճողոպրում, որ գլուխ պահենք:

Նրա թևավոր արտահայտություննե- րը, որ նստվածք են տվել իմ սերնդակից- ների հիշողության մեջ («Չիվիլոկ», «պինգ-պոնգ», «հերոս ՃՆՃՈՒԿ»), բոլորս կրկնում էինք ու վերհիշում հիմա, երբ հա- վաքվում ենք:

Է.Գաբրիելյանը փորձաշատ մանկա- վարժ է, անմնացորդ նվիրումով էր լցված մանկավարժական գործին: Նրա աշա- կերտները լավ արդյունքներ էին գրան- ցում ֆիզիկայից: Կարողանում էր սեր և հետաքրքրություն առաջացնել իր դասա- վանդած առարկայի հանդեպ: Լեզու էր գտնում բոլոր աշակերտական կոլեկ- տիվների հետ ու արժանանում հարգան- քի, ընդունվում թե՛ մեծերի և թե՛ փոքրերի կողմից:

Այսօր էլ ընկեր Գաբրիելյանը հպար- տությամբ նշում է, որ համացանցում իրեն փնտրում ու գտնում են օտար երկրում գտնվող մեր դպրոցի բոլոր նախկին սա- ները, որոնց հետ ջերմ կապերը պահում ու փայտաբան է:

Մեզ դասավանդելու տարիներին երի- տասարդ էր, տաքարյուն, շուտ փոթորկ- վող, բայց և անմիջապես խաղաղվող, անհիշաչար:

Չէինք վախենում, պարզապես քաշ- վում ու հարգում էինք խիստ, պահանջ- կոտ ուսուցչին, գիտեինք, որ դասերից դուրս բարի ու կատակասեր է:

Այսպիսի լուսավոր մարդկանց, որոնց ուսուցիչ են անվանում, չնկատել ու չգ- նահատելն անհնար է, անկարելի:

Թող Ձեր վաստակած հանգստի օրերն անցնեն երջանիկ, երբեք սիրո և ուշադրության պակաս և կարիք չունե- նաք:

Տոնական այս օրը շնորհավորում են իմ և բոլոր այն ուսուցիչներին, որոնք պատվով են կատարում իրենց պատվա- բեր առաքելությունը:

Ձեզ համար ընդմիջյալ աշակերտ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ Ասկերանի էդ. Բարսեղյանի ան- վան դպրոցի ուսանող

Շնորհավորանք

ԱՆԿԵՂԾ ՄՐՏՈՎ ԲԱՐԻ ՃԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ



Ամենակարևոր երևույթը, ամենա- ուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը, այս ամենն ամ- բողջանում է ուսուցչի մեջ:

Արդիֆ Դիստերվեզ

Կյանքի 50 տարին բոլորեց մեր հարգարժան ու սիրելի գործընկերու- իի Գայանե Բադալյանը: Ստեփանա- կերտի Աշոտ Դուլյանի անվան հ.2 հիմ- նական դպրոցի հայոց լեզվի և գրա- կանության ուսուցչուհին իր գուսպ ու համեստ պահվածքով, ազնիվ ու շի- տակ բնավորությամբ, բարեխիղճ ու պատասխանատու աշխատանք- քով արժանացել է գործընկերների ու սաների հարգանքին ու սիրուն: Գ.Բադալյանը ծնվել է 1968թ. հոկտեմբերի 7-ին Մարտունու շր- ջանի Աշան գյուղում՝ պարկեշտ աշխատավորի ընտանիքում, ժա- ռանգել է աշխատասեր ծնողների լավագույն բոլոր հատկանիշները: Գերազանց գնահատականներով ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստի- տուտ:

50 տարի, կես դար կանգնած են մատաղ սերնդի կողքին, նրանց հետ ուրախանում են, նրանց հետ տխ- րում, նրանց հետ խաղում են, նրանց հետ երգում: Ու ամեն տարի ու ամեն աշուն դնում են նոր սկիզբ, հանդի- պում նոր տրոփյունի, սրբում նոր ար- ցունքներ ու քրտինք: Իսկ երբ հասնում են դպրոցական վերջին զանգին, մի պահ հետ են մայրում դեպի իրենց առաջին քայլերն ու առաջին տառը՝ «Ա»:

Իմ ապրումներն ու անկեղծ նվիր- վածությունը իմ հայ մանուկներին իրենց հետքերը թողնեցին՝ ինձ նվիրե- լով գրչին և անսպառ ստեղծագործա- կան աներևույթ պաշար, որն էլ այսօր դառնում է զանգեր, մտնում հայոց զանգարան: Նշանակում է՝ զգացածու ու մանկական անարատ սերը, հայրե- ինքը, հայ մարդը, բնությունն ու մեր առօրյան տեղ չարեցին իմ հոգում և անապատելի պոթևկացին՝ վերածվելով անսահման ու անգնահատելի և մնա- յուն զանգերի:

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ԳՊՐՈՂՅ

Մի կողմից հպարտ են: Հպարտ են իմ աճեցրած սա- ներով: Նրանք՝ իմ սաներն այսօր հա- մալրում են Հայաստան ու Արցախ հայ օջախների, հայկական հողի պաշտպանության և բարգավաճման գործով զբաղվողների շարքերը: Այս երբ անցան...

Շատ սաներ են ունեցել, շատ ապ- րումներ ու հուզմունքներ, սակայն այս տարի, այս ուսումնական տարին իմ վերջինն է, վերջինը... Այս տարի, 2018թ. մայիսին դպրո- ցական վերջին զանգի հնչյունների տակ կկանգնեմ ես՝ տարեց դասվար Հրանուշ Մամբրեյան և հրաշալի շր- ջանավարտներ Լուսինե, Աշոտը, Նո- ռիկը: Շրջանավարտներ, որոնց հետ աշխատել են դեռ առաջին դասարա- նից:

Այսօր միասին կանգնած ենք բա- ժանման շեմին: Տոնություն, դպրոց, ցտեսություն, իմ կյանքի լավագույն ու անգնահա- տելի տարիներ, իմ թոթովախոս մա- նուկներ, իմ հայ առողջ ծիլեր, հայոց աշխարհի նուրբ ու քնքուշ կոկոններ: Արտիս մեջ առաջացել է մի զգա- ցում, որ առաջ չկար, ինձ թվում էր՝ ես էլ ամեն ուսումնական տարի մի նոր ծիլ են, քանզի մանկան հետ սկսում են Մեարոպատառ այբուբենից: Քանզի ես էլ սկսում են թվերը՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0 սովորել, ճանչել ու մարդկանց հետ նոր կյանք են առնում, զինվում հայոց գրերով: Այս երբ անցան... Իզուր չանցան: Տարիներն ինձ բերեցին ճանաչում, բազում խրախուսանք, գնահատում, մեծարում, պարգևատրումներ, կոչում (ծողովորդական կրթության գերագան- ցիկ), որի համար երախտապարտ են,

զգացի որ իմ փոքրիկ բարեկամներն ինձանից անբաժան են մինչև կյանքիս վերջին շունչը:

Այս երբ անցան... Այս երբ անցան տարիները, և ես կանգնեցի բաժանման շեմին: Մայիսի վերջին, 2018թ. մայիսի վերջին հնչեց իմ վերջին զանգը... Մնաս բարով, դպրոց, սիրելի դպ- րոց, իմ կյանքի իմաստ, իմ տոթյուն: Մնաք բարով, սիրելի՛ նոր ծիլեր: Մնաք բարով, գրատախտակ ու կավիճ:

Մնաք բարով: Իմ շատ սիրելի, իմ շատ թանկ մանկավարժ ընկերներ և իմ շատ սիրելի, բարի և անշահախն- դիր, խելացի և նվիրված, երիտասարդ տնօրեն Ռուզան Ալլահվերդյան: Դուք շատ երկար, մինչև մահ կմնաք ինձ հետ, իմ հիշողություններում...

Իսկ դու, իմ գրիչ, եղիր ինձ նե- ցուկ, միշտ ինձ հետ, միասին հուշեր կգրանցենք:

Մնաս բարով, դպրոցական զանգ, որով սկսում և որով վերջացնում էինք մեր թանկ դասաժամերը: Մնաս բարով, դպրոց... 1968-2018թթ. Հայաստան - Արցախ

Հրանուշ ՄԱՄԲՐԵՅԱՆ ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Դարաջինարի միջն. դպրոցի ուսուցչուհի

ԱՄՔԻՆ

ՈՐ ԴՊՐՈՑԻ ՈՐ ՆԱՏԱՐԱՆԻՆ Է ՆԱՏԱԾ ԱՊԱԳԱ ՆՅՈՒՏՈՆԸ



2018 թվականի հոկտեմբերի 5-ին Արցախի Հանրապետության նախագահը պատվավոր կոչումներ շնորհեց մի շարք ուսուցիչների կրթության զարգացման, մատակարարողի ուսուցման ու դաստիարակության գործում ունեցած վաստակի և Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Նախագահին իր բարեմաղաքներից ու շնորհակալական խոսքից հետո մի քանի հրատապ խնդիրների պարզաբանման ու դրանց լուծման գործում նշեց ուսուցչի բարձր դիրքի մասին:

Ես հնարավորություն չունեցա իմ մտքերը և մտածածն արտահայտել առաջ քաշված խնդիրների լուծման ուղղությամբ: Կցանկանալի այն փոխանցել հարգված ու մտավորականության խոսափող «Լուսարար» թերթի միջոցով:

Նախագահին շատ էր մտահոգում, որ երկրի անցած ու անցնելիք ուղու ճիշտ և օբյեկտիվ պատմության գրավոր արձանագրումը միշտ չի ընթանում առանց պոպուլիզմի ու կեղծումների, և դա բերում է վատ հետևանքների:

Մեր երկրի ամեն մի բնակավայր, ամեն մի համայնք մի պատմություն է, Արցախի ընդհանուր պատմության մի թերթիկ է, մի էջ, և նրա անցած ուղու պատմությունը պետք է հանրությանը ներկայացվի օբյեկտիվ, խելոք-գիտակ մարդկանց կողմից, ովքեր հեռու են պոպուլիզմից ու մտքի գոլությունից:

Մեր պատմությունը ազգային արժեք ու գանձ է Արցախի մշակույթի ոսկե գանձարանում:

Այս նպատակով Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար պարոն Բեգլարյանի ցուցումով և հրահանգով շրջանի բոլոր դպրոցներում և համայնքային մշակույթի օջախներում որոշվեց ստեղծել դպրոցի պատմություն, գյուղի պատմություն (մասնավորապես գյուղի ինքնապաշտպանության ջոկատների անցած ուղու և գյուղի նշանավոր մարդկանց մասին):

Այսօր այն իրագործվում է շրջող կրթության վարչի վարչի պարոն Մայիլյանի անմիջական ղեկավարությամբ:

Իհարկե, գովասանքի է արժանի այս նախաձեռնությունը, բայց հետագա խեղաթյուրումից զերծ պահելու համար առաջարկում են այդ փաստաթղթերն առնվազն հաստատել համայնքի ավագանու նիստերում կամ քննարկումից հետո միայն ճանաչել օրինական:

Մեզ մոտ՝ Ազնեքի միջնակարգ դպրոցում բոլոր դասղեկները, ուսուցիչները, զինղեկը, նաև համայնքի ակումբավարն ունեն և՛ դպրոցի, և՛ գյուղի ինքնապաշտպանության ջոկատի անցած ուղու կենսագրականը: Ավելացնեն նաև, որ նշված կենսագրականը գրվել է տողերիս հեղինակի կողմից և տպագրվել «Լուսարար» և «Մարտիկ» թերթերում:

Մեր գյուղի ինքնապաշտպանության ջոկատի անցած ուղու կենսագրականը քննարկվել է ջոկատի հրամանատարների հետ, որից հետո միայն ուղարկվել տպագրության:

Կարծում են, սրանից դուրս այլ բովանդակությամբ հրատարակումները և

այնտեղ գետեղված շինծու փաստերը հեռու են օբյեկտիվ լինելուց:

Այսօր ես զբաղված եմ գյուղի պատմության և նրա նշանավոր մարդկանց մասին տեղեկությունների հավաքման գործով, որպեսզի ամբողջական դարձնեմ համայնքի պատմությունը:

Դպրոցի թռչակառու ուսուցիչ, բոլորի կողմից հարգված Արտյուշա Միքայելյանը գյուղի պատմության բովանդակալից շարադրման համար հավաքել է արժեքավոր ու հետաքրքիր փաստեր, և խմբագրելուց հետո դրանք կծառայեն նույն նպատակին:

Արտյուշա Միքայելյանի որդու՝ Գրիշա Միքայելյանի՝ մեր ինքնապաշտպանության ջոկատի առաջին հրամանատարի անունով է կոչվում գյուղի դպրոցը: Նա հերոսաբար զոհվել է Քարին տակի ինքնապաշտպանության մարտում 1992 թվականի հունվարի 26-ին:

Կոչ կանեի Արցախի դպրոցների ուսուցչական կոլեկտիվների կարող ուժերին, ովքեր չունեն այս ուղղությամբ կատարված գործեր, անմիջապես լծվել այս պատվաբեր և պարտադիր գործին, այլապես ո՞վ պետք է կատարի այս գործը, եթե ոչ մենք՝ ուսուցիչներս:

Գյուղի պատմությունը կլինի ամբողջական և լիարժեք, եթե դպրոցներում կան համայնքում ստեղծվեն պատմության թանգարաններ, իսկ եթե կան, ապա հարստացվեն գյուղի պատմությունը հաստատող կամ հարստացնող նյութական-առարկայական իրերով:

Երկրի ղեկավարի կողմից առաջ քաշված մյուս հիմնախնդիրների լուծումը բերում է մասնավորապես ուսման որակի բարձրացման:

Այո՛, այսօր ոչ պատկերազան, ոչ խաղաղություն տիրող Արցախում մեզ պետք են խելացի և կիրթ շրջանավարտներ՝ ապագա Նյուտոններ և Համբարձումյաններ: Նրանց հայտնաբերելու և աճեցնելու գործում մեր հապաղումները տեղին չեն, և պատմությունը մեզ չի ների, ինչպես նաև չեն ների մեր նահատակները, որոնք կյանքի գնով ստեղծեցին այս փխրուն խաղաղ անդրորդ:

Անցած դարի 60-ական թվականների տվյալներով՝ գիտությունը ամեն տարը տարում այնքան էր զարգանում, ինչքան՝ նախորդած հարյուր տարվա ընթացքում:

Այժմ գիտության առաջընթացը և արտադրության մեջ գիտության և նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացն ավելի արագ է ընթանում: Պետք է ժամանակի հետ համահունչ քայլել այդ հարցում:

Մենք աշխարհին խոշոր գիտական ուղեղներ ենք տվել, բայց այսօր մեզ պետք են խորը գիտելիքներով, ինժեներական հմտություններով դպրոցի շրջանավարտներ, որոնք կստեղծեն և կզարգացնեն մեր ռազմական արդյունաբերությունը և տնտեսությունը ընդհանրապես:

Այո՛, սա ռժվար գործ է, բայց անհրաժեշտ կենսական խնդիր է, որի իրագործման համար, հուսով եմ, կստանանք աշխարհի հայ մեծահարուստ հայրենասերների աջակցությունը:

Բնական գիտությունների, մասնավորապես ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության դերը մեծ է այս գործում ապագա Կորոլաներ, Իոսիֆյաններ ունենալու համար:

Այսօր մենք չգիտենք որ դպրոցի որ նստարանին է նստած ապագա մեր Նյուտոնը կամ Համբարձումյանը, բայց նրանց որոնելը մեր ազգային պարտքն է:

Իհարկե, ինչպես ամեն մի բնագավառ, այնպես էլ կրթության բնագավառը զերծ չէ թերություններից, այն շտկել և ուղղել է պետք հրատապ, այլապես ամեն

ինչի մեղավոր ժամանակը մեզ չի ների:

Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը Ասկերանի ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում ու իր մասնավոր հանդիպումներում և զրույցներում առաջ է քաշել և կրթական, և՛ գյուղապահպանության մասին բազում արժեքավոր խնդիրներ և ամենից կարևորը՝ այդ խնդիրների լուծման իր տեսլականը:

Մասնավորապես գյուղապահպանության գործում համայնքի ղեկավարների և տնօրենների համատեղ աշխատանքը և համատեղ պատասխանատվությունը կենսական պահանջ է: Այո, խորհրդային տարիներին հենց համատեղ պատասխանատվությունն էր, որ կենդանի է պահել մեր գյուղերը և դպրոցները, և ինչո՞ւ այսօր այն չկիրառել:

Ես մանկավարժական ասպարեզ եմ մտել այն ժամանակ (1970թ.), երբ դպրոցում լուրջ բարեփոխումներ էին կատարվում: Իմ գրեթե կեսդարյա մանկավարժական աշխատանքում դպրոցի լուրջ բարեփոխումների վկան եմ եղել: Անշուշտ, բարեփոխումները միշտ էլ անհրաժեշտ են, և դա զարգացող կյանքի պահանջ է:

Բարեփոխումների անվան տակ դպրոցներում որոշ դեպքերում կատարվել են նաև առարկայական ծրագրերի, դասագրքերի, դպրոցի առօրյայի, պատվերով նոր առարկաների ուսումնասիրություններ, որը միշտ չէ, որ լավ արդյունքներ է տվել:

Դպրոցի հիմնախնդիրները պետք է լուծել՝ չվնասելով ուսումնադաստիարակչական գործին, առանց պոպուլիզմի, հերթականությամբ և ավելի՛ն՝ ընկերակցելով այդ հիմնախնդիրներին:

Դպրոցը չի սիրում հեղափոխական փոփոխությունները, դրանք պետք է կատարել էվոլյուցիոն ճանապարհով՝ առանց ցնցումների: Դպրոցն անհատական տունն է, փորձադաշտն է, որտեղ ինչ ուզես կցանես: Դասագիրքն առանց փորձաքննության ենթարկելու դպրոց մտցնելը, նրա մեջ աշակերտի տարիքին ու մտքին չհասնող թեմաների, ծրագրում անորակ կրկնվող թեմաներն ու բաժինները մտցնելը սխալ է: Դրանով կասեցնում են դպրոցի կանոնակարգված զարգացումը: Այսօր մեր դպրոցին պետք է արագ զարգացում՝ արտադրությանը պատրաստ շրջանավարտ:

Դպրոցը չի սիրում ձևականությունների հետևից ընկնելը:

12 տարի աշակերտը սովորում է դպրոցում և առանց որևէ մասնագիտության այբուբենին տիրանալու հրաժեշտ տակիս դպրոցի ու մտնում կյանք: Իմ կարծիքով՝ դա այնքան էլ ճիշտ չէ: 12-րդ դասարանի աշակերտը երկրորդ կիսամյակում բացի իրեն հետաքրքրող առարկաների դասընթացի կրկնությունից հնարավոր է, ձեռք բերի նաև որևէ մասնագիտության տիրանալու հմտություններ ու կարողություններ:

Հայրենիքին նվիրվածության միավորներ չկան, այլ կան որակական չափանիշներ: Հայրենիքը միշտ վարձատրույց է լինում նվիրված գավակներին: Ուսուցչի համար ամենամեծ գնահատականը իր դաստիարակած, կրթած սերնդի երախտագիտությունն է:

Ես հավատում եմ իմ երկրի ծաղկուն ապագային ու վստահում այսօրվա մեր երիտասարդ սերնդին:

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ազնեքի միջն. դպրոցի
թռչակառու ուսուցիչ
ԱՀ վաստակավոր
մանկավարժ

ՎԱՐՊԵՐ՝ ՈՒՍՈՒՋՅՈՒ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Քաշաթաղի շրջանում գործում են 53 հանրակրթական դպրոցներ, որոնցից Սարատակի միջնակարգը տարրական դասարանների մասնաճյուղ ունի Գետափում: Դպրոցներում աշխատում են 700-ից ավելի ուսուցիչներ: Գործում են նաև երեք պետական մանկապարտեզներ՝ Բերձորում, Կովսականում, Մոշաթաղում և մեկ բարեգործական՝ Քարեգահում:



Բերձոր քաղաքում գործող մարզադպրոցը խմբակների ունի շրջանի այլ համայնքներում՝ Կովսական, Իշխանաձոր, Ուռեկան և այլն: Արվեստի դպրոցը նույնպես խմբակներ ունի Կովսականում, Միջնավանում, Իշխանաձորում, այլ բնակավայրերում: Ուսուցչի օրվա առթիվ գրեթե բոլոր կրթօջախներում կայացան տոնական հանդեսներ, միջոցառումներ: Շրջանի մանկավարժներին օրվա կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը: Օրվա ընթացքում շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը և օգնական Ստեփան Սարգսյանն ընդունեցին աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի աշխատակիցներին՝ բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի գլխավորությամբ: Շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի անունից (նա հարգելի պատճառով բացակայում էր) շնորհավորեցին ուղորտի պատասխանատուներին, մաղթեցին բարին, կարևորեցին ուղորտի դերը մեր մանուկների կրթման, դաստիարակման ամենակարևոր գործում:

Եղան այցեր նաև Բերձորում և մոտակա բնակավայրերում գործող հանրակրթական և արտադպրոցական հաստատություններ: Շրջվարչակազմի ղեկավարի օգնական Ստ. Սարգսյանը և աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանն այցելեցին Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց, մարզադպրոց, գիշերօթիկ հաստատություն, արվեստի դպրոց, պետական մանկապարտեզ և ծաղիկներ նվիրեցին մանկավարժներին՝ շնորհավորելով մասնագիտական տոնի կապակցությամբ:


Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչն այցելեց Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2, Ներքին Սուսի Սերոբ Հանյանի անվան և Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան միջնակարգ դպրոցներ՝ ուսուցիչներին նվիրելով վարդեր:

Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը եղավ Քարեգահում, հանդիպեց դպրոցի և մանկապարտեզի աշխատողներին, նվիրեց ծաղիկներ, շնորհավորեց՝ մաղթելով ամենայն բարին և հորդորեց աշխատել նվիրումով:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՄԵՆԵՐ

«ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՊՈԵՏՆԵՐԸ ԵՐԲԵՔ ՉԵՆ ՄԵՌՆՈՒՄ»



Այլևս մեզ հետ չէ մոլորակի ամենաճանաչված հայերից մեկը, ֆրանսիական շանսոնի հայ արքան՝ Շառլ Ազնավուրը: Զարմանալի մի զուգահեռությամբ նա կյանքիս հրաժեշտ տվեց Երաժշտության միջազգային օրը...

կփորձենք, թեկուզ հպանցիկ, թերթել երգիչ, երգահան, գրող, դերասան, բեմադրիչ, հասարակական գործիչ Շ. Ազնավուրի կյանքի էջերը:

Իրեն հարյուր տոկոսով ֆրանսիացի, հարյուր տոկոսով հայ համարող երգիչը միշտ հպարտությամբ է մնել իր ծագումը, տարբեր բեմերում ու հարցազրույցներում մշտապես հնչեցրել է Հայաստանի անունը, պատմել Հայոց ցեղասպանության մասին, ինչի հետևանքով են ինքն ու իր հայրենակիցները սփռվել աշխարհով մեկ: Երգումն արմատներով հոր և իզմիրցի մոր՝ Միշա և Բնար Ազնավուրյանների ընտանիքի 2-րդ զավակը ծնվել է Փարիզում 1924թ. մայիսի 22-ին: Ծնողները նորածինը կնքել են Շահնուր անունով, բայց ֆրանսուհի բուժքույր համար դժվար էր արտաբերել այդ անունը, ուստի ծնունդների գրանցամատյանում նա դարձավ Շառլ: «Իմ հայրը երգում էր Սայաթ-Նովայի երգերը, ես դրանք թարգմանում էի: Իմ նախնիների երգերը մեր ընտանեկան երգացանկում էին... Դա մեր ֆուլկլորն էր, որ գալիս է դարերից հին-հին, մեր այդ երգերում հավերժ ապրում են անցավորները, սերը և գինին»,- գրել է Ազնավուրը: Նա համոզված էր, որ մարդ կարող է ուժեղ լինել միայն եթե ճանաչում ու մեծարում է իր արմատները: Շառլի հայրը երիտասարդ տարիներին ապրել է Թիֆլիսում, որտեղ աշխատանքի համար տեղափոխվել էր նրանց ընտանիքը, իսկ պարզ թողարկել Երաժշտության գործարարական կենտրոնում: Անցյալ դարի 20-ականների սկզբին, Ֆրանսիա տեղափոխվելուց հետո, Միշա Ազնավուրյանը երգում էր ռեստորաններում՝ մինչև կիրիմներ իր ռեստորանը՝ կոչելով այն «Կովկաս»: Երգիչը միշտ հպարտացել է իր ընտանիքով, իր ծնողներով: «Իմ ծնողները հիանալի մարդիկ են: Նրանք իմ նկատմամբ յուրաքանչյուր վերաբերմունք ունեն: Ես ճանաչում եմ երգիչների ծնողների, որոնք իրենց զավակների մասին ասում են. «Նա անկրկնելի է, նա անզուգական է, նա ամենամեծն է»: Սեր տանը ինձ երբեք, երբեք այդպիսի բան չեն ասում: Երբ ես ավարտում եմ համերգը, հայրս ասում է՝ լավ էր: Ու դրանով է ամեն բան վերջանում է: Հետո խոսք է բացվում իր կենսասեղների, խաղողի վազերի և ուրիշ հարցերի մասին»,- գրել է երգիչը: Իր «Ազնավուրը Ազնավուրի մասին» և «Անցանք օրեր, հուշեր» գրքերում նա սիրով է վերհիշել իր ծնողներին: «Իմ հայրը մեծ երեսալու է: Նա միշտ էլ այդպիսի է եղել: Իմ հիշողության մեջ, ամենամալ մանկությունից մինչև հիմա, նա ոչնչով չի փոխվել: Երբ ես փոքր էի, նա գիշերները հաճախ ուշ էր վերադառնում: Նա մտնում էր մանկական սենյակը, գաթնեցնում ինձ ու քրոջս և նստեցնում դաշնամուրի առջև: Որքան բարձր էր հնչում մեր ձայնը, այնքան նա իրեն երջանիկ էր զգում»:

Մինչ հայրը երգում ու նվագում էր ռեստորաններում, տան հոգսն ամբողջովին մոր ուսերին էր. «Տեսնում եմ մորս՝ նավթի լամպի տակ, «Ձինգեր»-ի ոտնակն անընդհատ պտտելիս, շտապելով հաջորդ օրը հանձնելիք գործն ավարտել, ստանալու համար արդյունքով իր անքուն գիշերվա, իր սիրասուն ընտանիքի գոյության համար անհրաժեշտ այդ ֆրանկը: Հիվանդ թե առողջ, հոգնած թե ոչ, մայրիկը լծվում էր աշխատանքին: Հազվագյուտ պահերին մայրս դաշնամուր էր նվագում կամ տրվում գրելուն: Տախել ժամանակ նա Թուրքիայում հայկական թերթի խմբագրությունում էր աշխատել, և գրելու ցանկությունը երբեք չէր լքում նրան»: Շառլի մայրը դերասանուհի էր, այդ պատճառով էլ նա թատրոնի աշխարհին ծանոթ էր դեռ մանկուց: 9 տարեկանում տարված լինելով արտիստի կյանքով՝ նա թողեց դպրոցը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ազնավուրյանների տանն ապաստան էին գտել փախուստով փրկված բազմաթիվ ռազմագերիներ՝ հայեր, ռուսներ, հրեաներ: Ֆրանսիական դիմադրության լեգեոնար հերոս Միսաք Մամուչյանն ու նրա կինը՝ Մելինեն, բազմիցս փրկվել են հետապնդումից նրա հոր օգնությամբ:

Իրենց գաղթական հայրենակիցների պես Ազնավուրյանների ընտանիքի համար նա դժ-

վար էր օտար երկրում ոտքի կանգնել, ապրուստի միջոցներ հայթայթել, բայց նրանք երբեք չեն չարացել և իրենց զավակներին ներարկել են «լինել զգայուն և արտասովոր ընդունակ»: Այդ տարիների քնարական պատկերը կարելի է տեսնել երգչի «Ինքնակենսագրություն» երգում, որը դժվար մանկության, ծնողների բարություն ու լավատեսության, մարդկային ու ազգային իր տեսակի լավագույն խտացումն է:

Աչքերս բացել, տեսել եմ մեր տան ողորմելի ու հին կահկարասին,
Դա Լատինական թաղամասում էր, Մայրը Փրենս փողոցի վրա,
Իմ շրջապատում դերասաններ ու երգիչներ կային,
Այդ մարդիկ միայն անցյալ ունեին, բայց ոչ՝ ապագա,
Այդ մարդիկ չքնաղ, անմահ էին, ապրում էին լոկ երազանքներով,
Խոսում էին զուտ ռուսերեն ու հայերեն լեզվով...

Տարիներ անց, երբ ծնողներն արդեն հրաժեշտ էին տվել երկրային կյանքին, և Մարի Դյուկերը ֆիլմ էր նկարահանում Ազնավուրի մասին, հարցին թե՛ արդյոք արտասվում է նրանց հիշելիս, նա կպատասխանի. «Չէ, չեն լացում, բայց աչքերս մի քիչ թրջվում են, բարձր էլ երեկները թաց է լինում: Չեն պատկերացնում մեկը, ով կարող է մոռանալ իր ծնողներին»: Նրա հանրահայտ «Մամա»-ն համաշխարհային երգարվեստում երբևէ ստեղծված ամենահոգի ու հոգեցունց երգը կմնա: «Մայրերն ամեն ինչ գեղեցկացնելու առանձնահատուկ ձիրք ունեն: Շնորհիվ նրանց, և հաճախ միայն նրանց համար, ծնված օրվանից մենք դառնում ենք առասպելական ամենավորություններ: ...Երբ մայրս հիվանդ էր լինում, ինձ չէին հայտնում, որպեսզի չընդհատեմ իմ աշխատանքը: Նրանք գիտեին, որ ես հազարավոր մոլորակներ կկտրեմ, թեկուզ մի գիշեր նրա կողքին լինելու համար: Միայն երկար ժամանակ անց հայրս ասում էր. «Գիտե՛ս, մայրդ հիվանդ էր, ծանր հիվանդ»: Հորս պատկերացումով երգիչը նույնն է, ինչ ծովայինը ծովում: Ինչ էլ լինի, չպետք է նրա հետևից ուղղաթիռ ուղարկել: Պետք է սպասել, մինչև նավը խարխիս գցի նավահանգստում: Իմ ծնողները սպասում են իմ նավահանգիստ վերադառնալու, որպեսզի ինձ պատմեն իրենց հոգսերը»:

«Իմ ճանապարհը հեշտ ու համազգեստ չի եղել»,- գրել է Ազնավուրը: Շատ դառնություններ են ծաշակել այդ ճանապարհին. երեսիս փակված դռներ, հեգնանքով ու արհամարհանքով լի ժպիտներ. «Մի համառեք», «Ոչինչ չունեմք ձեզ համար», «Թողեք ձեր հասցեն, կգրենք», «Ամեն պատահական մարդու վրա ժամանակ չունենք կորցնելու... Ես ճաշակել եմ այդ բոլորը: Շատերի մահն էս եմ տվել թուրս, զսպել եմ արցունքներս ու կուչ ելել: Շատերի մահն զայրությամբ պոռթկացել են երբեմն, կոպտել են, կոպտել են ինձ: Կասկածն ու հուսահատությունը, բախտ չունենալու զգացողությունը հաճախ են գետնել ինձ, բայց ցանկ թաքցրել եմ, քաշվել եմ պատյանիս մեջ և ուժ հավաքել դիմանալու, պայքարելու համար»...

«Ես չափազանց շատ եմ սիրում կյանքն ու մարդկանց, որպեսզի ինչ-որ բանից հուսահատվեմ»,- գրել է երգիչը: Ինչպես ինքն է խստովանում՝ երբեք չի սիրել պարտվել, երբեք չի կարողացել հաշտվել պարտության: Իր բոլոր ձեռքբերումների ու հաղթանակների համար նա պարտական էր իր առասպելական աշխատասիրությանը: «Աշխատասիրությունը հայի գենն է՝ ամենակարևոր գծերից է... Ես չեմ հավատում ոգեշնչմանը, հավատում եմ քրտուսի աշխատանքին: Ես վարպետի պես աշխատում եմ յուրաքանչյուր բանիս վրա, հղկում յուրաքանչյուր արտահայտություն: Եթե պետք է օրեր, շաբաթներ կամ մուսուլման ամիսներ անցկացնել ճիշտ արտահայտությունը գտնելու համար, ես համառոտեմ ամեն ինչ: Հավանաբար իմ ամբողջ կյանքը ինքս իմ հանդեպ հաղթանակ է: Ես սկսել եմ գրոյից, ինքնուրույն եմ ամեն ինչ սովորել՝ երաժշտություն, գրականություն, դերաս-

անական վարպետություն: Այդ տարիներին ուսումը վճարովի էր, իսկ իմ ընտանիքի հնարավորությունները՝ համեստ, այդ պատճառով էլ շուտ լքեցի դպրոցական նստարանը և այդ պահից սկսած ստիպված էի ամեն ինչին ինքնուրույն հասնել»:

Նրա կյանքը եղել է պայքար ոչ միայն շրջապատի, այլև նախևառաջ ինքն իր դեմ: Նա հաճախ էր կատակով անդրադառնում իր ֆիզիկական թերություններին, հատկապես իր կարճ հասակին. «Որո՞նք են իմ պակասությունները: Չայնս, հասակս, շարժումներս և կրթության ու կուլտուրայի պակասը, ճշմարտախոսությունս, անհատականությանս պակասը: Չայնս փոխել անհնար է: Բժիշկները, որոնց դիմում եմ, միաբերան համոզում են, որ երգելուց ձեռք քաշեմ: Բայց ես պիտի երգեմ, թեկուզ կոկորդս պատռվի... Հասակս՝ 1մ 64սմ, նույնպես անհնար է ուղղել: Ռեսիսեն հաստ ներբաններով կոշիկներ չեն կարող հագնել: Միակ փորձը, որ արեցի մի քանի սանտիմետր շահելու համար, խայտառակ վախճան ունեցավ. Միացյալ Նահանգների իմպրեսարիները կարծում էին, որ երկու ոտքից կալ եմ: Մի լուծում կա միայն՝ եղածով յուր զնալ ու մոռացնել տալ այդ պակասությունը: Շարժումներս կարճահասակ մարդու շարժումներ են՝ կարճ, չոր ու կտրուկ: Այսուհետև պետք է աշխատեմ կլորացնել շարժումներս ու դանդաղ քայլել: Կրթությանս պակասը մեծ դժվարություն է, ձեռք եմ բերել յոթնամյա կրթության վկայականը, ոչինչ մեճակ չեմ սովորել: Սովորում եմ միայն ուրիշներին լսելով: Ե՛՞՞՞մարտասուսությունս. անուղղելի եմ. անարդարության համոզված լինում եմ: Անհատականությանս պակասը. ինձ նկատել տալու համար էքսցենտրիկ եմ հազմվում: Նկատում եմ, բայց ժպտում: Թուլակազմ, վախվորած երեխայից, ինչպիսին ծնվել եմ, պետք է դառնամ ուժեղ մարդ՝ միևնույն ժամանակ պահպանելով բարոյական նորմերը, որ ծնողներս են ներարկել՝ լինել զգայուն և արտասովոր ընդունակ...»

Շանսնի արբայի փառքի ճանապարհը տևեց... 20 տարի: Հանրությունը սուղոցներով էր ճանապարհորդում Շառլին, լրագրողները ծաղրում արտաքինը, բայց նա իր մեջ ուժ էր գտնում ու նորից ու նորից բեմ բարձրանում՝ մինչև ստիպեց լսել իրեն: 1944թ. ապրիլի 12-ին 19-ամյա Ազնավուրը գրեց իր առաջին երգը. «Ես հիշում եմ այդ ամսաթիվը, որովհետև այդ օրը ստեղծվեց իմ առաջին երգը՝ «Ես հարբած եմ»: Մինչև հիմա հիշում եմ թանաքի, թղթի բույրը, զարնանային արևի ջերմությունը և իմ առաջին, իսկական աշխատանքային օրվա անդորրը: Այդ ժամանակ ընդամենը 19 տարեկան էի: 19 տարեկանում չէի կարծում, որ իմ ամբողջ կյանքը նվիրելու եմ այդ գործին: Ես չգիտեի, որ ընդմիշտ կերտելու եմ իմ կերպարը»:

1946-ին նրա կյանքում հայտնվեց 50-ականների ֆրանսիական էստրադայի կուռքը՝ եղիթ Պիաֆը: Նրանք ծանոթացել էին Փարիզում. Պիաֆն ընկերների հետ պատահաբար հայտնվել էր Ազնավուրի ու Պիեռ Ռոշի համերգին, նրանց առաջարկել էլույթ ունենալ իր համերգային շրջազայության առաջին հատվածում: Բայց այդ հյուրախաղերը երկար չտևեցին: «Եղիթը հրաշք էր,- տարիներ անց կգրի երգիչը,- իսկ հրաշքին հնարավոր չէ դիմակայել»: Ու նա չէր դիմակայում: Այդպես սկսվեց Ազնավուրի կյանքի թերևս ամենագարնանալի՝ Պիաֆի հետ նրա տարօրինակ հարաբերությունների շրջանը: Դառնալով երգչուհու վարորդը, քարտուղարն ու «բաժակի ընկերը»՝ Շառլը տեղափոխվեց նրա բնակարան: Նա միշտ Պիաֆի կողքին էր և կատարում էր նրա բոլոր ցանկությունները՝ գիշերվա ժամը 3-ին շտապում էր քաղաքի մյուս ծայրը եղիթի սիրած խմորեղենի հետևից, ժամերով լսում նրա պատմությունները հերթական սիրելիակնի մասին, միաժամանակ երգեր գրում նրա համար: Եղիթից բաժանվելուց հետո նա Պիեռ Ռոշի հետ ամեն երկու աշխատանք էր փնտրում փարիզյան տարբեր ակումբներում: Ժամանակ առ ժամանակ բախտը ժպտում էր, կարողանում էր բեմ բարձրանալ, մի քանի երգ երգել, մի քա-

ՄՓՅՈՒՌՔԱՆԱՅ ԿՐԹՕՋԱՆՆԵՐ

ՈՐՊԵՍ ՄԱՅՐԵՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՀԱԿԻՐ

Կարպիս Եղոյանի հետ ծանոթացանք Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում Արևմտահայերենի և հայագիտության նորաստեղծ կենտրոնում վերջերս կազմակերպված համընդհանուր առիթով, որտեղ նա ներկա էր կենտրոնի ամերիկաբնակ հովանավորներ, գործընկերներ Զակոբ և Լուսինյանի ամերիկացիների հետ: Ելույթ ունենալով՝ նա իր ուրախությունն է հայտնել, որ Արցախը միացել է արևմտահայերենը վերածաղկեցնելու գործընթացին, քանի որ այսօր վտանգված է նրա գոյությունը, դասվում է մեռնող լեզուների շարքը:

որը հիմնադրել է արդեն 42 տարի է՝ ղեկավարում է ԱՄՆ-ում միակ հայկական՝ «Մաշտոց» համալսարանը (կոչվում է նաև քոլեջ): Միջնակարգ ավարտելուց հետո այստեղ սովորողները հայագիտությունից բացի 4 տարի ուսանում են մանկավարժություն, հայոց լեզու, գրականություն, և 15 մասնագիտություն: Տեղեկացանք, որ որպես քույր համալսարան է հաստատվել Լիբանանի Զայկազյան համալսարանի հետ, որի ղեկավարը՝ վերապատվելի Փոլ Զայրոսյանը, Կարպիս Եղոյանի մորաքրոջ տղան է, այսինքն՝ եղբայրներով, մեկը՝ Արևմուտքում, մյուսը՝ Արևելքում, հայապահպանության գործունեություն են ծավալել: Լուս Լինյանի «Մաշտոց»-ը նաև քույր ունի Երևանում՝ ի դեմս «Ուրարտու» համալսարանի և համագործակցության քայլ է սկսել Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հետ:

համար ուսուցիչներ պետք է պատրաստենք: Եվ մեր քոլեջը միակն է, որ մտավորականներու այդ փառանքը, այդ ուսուցիչ-ուսուցչուհիները, որպես շրջանավարտ կըրնա ընծայաբերել մեր գաղութին, որպեսզի կարենանք սատարել հայակերտումի անհետաձգելի աշխատանքները Լուս Լինյանի մեր հայախոս գաղութներում», - ասաց «Մաշտոց»-ի ղեկավար Կարպիս Եղոյանը: Նա ուրախությամբ տեղեկացրեց, որ աշխատանքներ են տանում Ամերիկայում հայկական charter school (հանրային դպրոց) բացելու ուղղությամբ, որը կկրի Զակոբ Այնթապյանի անունը: Ինչո՞ւ է առավել charter դպրոցը: Ըստ Կարպիս Եղոյանի՝ Ամերիկայում հայ երեխաների 3 տոկոսն է հաճախում հայկական դպրոց: Շատ հայ ընտանիքներ են ուզում, որ իրենց երեխաները հայկական վարժարան հաճախեն, բայց քանի որ դրանք թանկ են, բոլոր հայերը չեն կարող իրենց թույլ տալ այդ բանը և ստիպված երեխաներին ուղարկում են օտարալեզու կրթարաններ: Ընդհանրապես դպրոցները ԱՄՆ-ում անվճար են, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների՝ շենքային պայմաններ, աշակերտների քանակ, նյութատեխնիկական հագեցվածություն և այլն: Վճարովի լինելու

պատճառով «հայկական դպրոցները հետզհետե իրենց ծիլերը, քանակը և որակը պիտի կորցնեն, ինչպես մի քանի տարի առաջ անոնցմե մեկը էլ նույն կացությունն է», - մտախոհությամբ արձանագրեց Կարպիս Եղոյանը, միևնույն ժամանակ տեղեկացնելով, որ դոկտոր Զակոբը և տիկին Լյուսինյանն օգնում են, որ բարձր կարգի հայկական վարժարաններ ստեղծեն Ամերիկայում: «Այս անհետաձգելի առաքելությունն է, քանի որ ինչպես որ բոլոր գիտեք, մեր լեզուն պետք է միացնեն և վերամիացնեն մեր ժողովուրդը»:

Պարոն Կարպիսն ասաց, որ որպես ջահակիրները մայրենի լեզվի իրենց հպարտ կզգան. «Վտանգված գոտի են նոր արշալույսի մը պիտի դիմավորենք արևմտահայերենի վերածաղկումը», և արժևորեց Արևմտահայերենի կենտրոնի բացումը Արցախում. «Դուք մեծ գործ ունիք կատարելու այս մարզի մեջ, քանի որ դուք եք առաջալույսերը, դուք եք դեսպանները, և երբ հունդ կցանցեք, կտեսնենք, որ բազմաթիվ պտուղներ, բազմաթիվ ծաղիկներ պարտեզ կունենան: Եվ ահավասիկ, այդ հունդերը այստեղ ցանկված են: Անդրադառնալով «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հետ համագործակցությանը՝ ասաց, որ պատ-

րաստ են ուսանողների, դասախոսների փոխանակումներ կատարել, ամառային դասընթացներ կազմակերպել: Ամեն տարի Համաշխարհային ուսուցչուհի են վերապատրաստում «Մաշտոց»-ում. «Համաշխարհային այսօր իսլամացած հայեր կայրեն, սակայն այնտեղ մեր հայոց լեզուն կսովորեցնեն մեր երեխաներուն, մենք ատոնց մեծ արժեք կուտանք և հրավիրել ենք նրանց, որպեսզի մեր քոլեջում 8-շաբաթյա վերապատրաստություն անցկացնեն և վերադառնան, ավելի մեծ եռանդով լծվեն Համաշխարհային փոքրիկներին մայր լեզուն սովորեցնելուն»:

Եթե ասվածին ավելացնենք, որ ամեն տարի Կարպիս Եղոյանի գլխավորությամբ ամերիկահայերի խումբն այցելում է Արևմտյան Հայաստան, ինչպես այս տարի էր, ավելի ցայտուն կդառնա մեր հայրենակիցների հայրենասիրության չափը: Պարոն Կարպիսն այս տարի իր 30-րդ այցն է կատարել Մայիսի-հունիսի հայրենիք: Ամեն այցից հետո գիրք է հրատարակում հայերեն լեզվով՝ մեր պատմությունը փոխանցելու մեր մատաղ սերունդին: Իսկ այս տարի հրատարակել է այդ բոլորի հանրագումարն՝ «անգլերենով»՝ «Հայերի լուծության մեջ» վերտառությամբ:

Վ. ՕՍԿԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՆԵՐԱՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ղեկավարության հետ համատեղ քննարկվեցին ներառական կրթության հիմնախնդիրները: Բանախոսը «Դասավանդիր, Հայաստան» ծրագրի 1-ին սերնդի ներկայացուցիչներից Մանուկ Խաչատրյանն էր, որը ծրագրին միացել էր որպես հատուկ մանկավարժ և հոգեբան, իսկ նրա ավարտից հետո մնացել է կրթության ոլորտում, ՀՀ ԿԳՄՆ-ի հետ, որպես ներառական կրթության փորձագետ, մշակել է «ՀՀ-ում համընդհանուր ներառականության ներդրման ճանապարհային քարտեզ»-ը: Նա ներկայացրեց քննարկմանը ներկայացրեց Արցախում ներառական կրթության իրականացման, գնահատման և կազմակերպման արդյունավետության բարձրացման վերաբերյալ իր հետազոտության արդյունքները՝ հորդորելով այն չդիտարկել որպես խոր վերլուծություն, քանի որ դա մի ոլորտ է, որը պահանջում է ծանր, երկարաժամկետ, շահագրգիռ տարբեր կողմերի ներգրավմամբ գործընթաց: Նաև շնորհակալություն հայտնեց Արցախում ներառական կրթության գործընթացն անմիջականորեն իրականացնող ԱՀ ԳՊԿ-ին՝ նրա ղեկավար Յուրի Քարամյանին և տվյալ բաժնի պետ Հասմիկ Եսայանին քննարկվող թեմայի վերաբերյալ իրեն բավականաչափ տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև փոքր, քիչ ռեսուրսներ ունենալով հանդերձ՝ բավականաչափ աշխատանքներ կատարելու համար, թեպետ անելիքներն էլ քիչ չեն:

խաների քանակը 0 է, փաստացի այս խնդիրը լուծում է տնային ուսուցումը, որտեղ աշակերտների քանակը 2018թ. 49 է: Խնամքի կենտրոնները, որոնք առնչվում են հատուկ կարիքներով երեխաներին ծառայությունների մատուցման հետ, «Շող» կենտրոնն է Շուշիում, Ասկերանում, որտեղ կրթություն են ստանում համապատասխանաբար 32 և 24 աշակերտներ և Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնը Ստեփանակերտում, որտեղ 0-18 տարեկան 200 երեխա է տարեկան ծառայություն ստանում:



2010թ. ներառական կրթության ներդրման մասին որոշումից հետո ուսուցիչների միայն 10 տոկոսն է վերապատրաստվել, և վերապատրաստումը կատարվել է ներառական կրթության գաղափարախոսության և ԿԱՊԿՈՒ երեխաների գնահատման ու աջակցման գործառնությունների կիրառման մասով, և վերապատրաստումներն ուղղված չեն եղել դասավանդման կարողությունների զարգացմանը:

գեբանամանկավարժական գնահատման կենտրոնը: Տնային ուսուցումը երեխայի կրթական խնդրի լուծում է, հետևաբար՝ պետք է հիմնվի կրթական գնահատման վրա:

Արցախի ԲՀ կենտրոնի տվյալները ցույց են տալիս, որ այն երեխաները, ովքեր առաջին գնահատումից հետո տնային ուսուցում են ստացել, երկու տարի հետո վերագնահատման ժամանակ ավելի ցածր կարողություններ ու գիտելիքներ են դրսևորել՝ ըստ նույն գնահատման սանդղակների: Եզրակացությունը՝ տնային ուսուցումը բացասաբար է անդրադառնում ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման ու կրթություն ստանալու վրա:

Փորձագետի դիտարկումով պետք է փոփոխություններ մտցնել օրենքում՝ վերանայել տնային ուսուցում կազմակերպելու

բանակ.

- ուսուցչի օգնականի հաստիքի ավելի շուտ ներդրում, քան նախատեսված է 2021թ. ու վերապատրաստում: Տնային ուսուցման ուսուցիչները և աջակցման թիմերի այն աշխատողները, որոնք չունեն մասնագիտական կրթություն, բայց ունեն մանկավարժի որակավորում, կարող են լինել ուսուցչի օգնական.

- առկա աջակցման թիմի մասնագետների վերապատրաստում, մրցույթի հայտարարում՝ նոր ու որակյալ մասնագետներ հավաքագրելու և ընտրելու համար.

- համատեղ դասավանդման մշակույթ՝ ներառական ու բազմաձևակազմ դասարաններում, ուսուցիչների, մասնագետների և ուսուցչի օգնականների վերապատրաստում, ներառական կրթության դասավանդման կարողությունների զարգացում.

- ԱրՊՀ-ում ներառական կրթության դասավանդման ծրագրի ներդրում, ներառող ուսուցիչների, մասնագետների պատրաստում, համագործակցություն ՀՊՄՀ-ի հետ,

- առկա ռեսուրսների մոբիլիզացում՝ ՀԿՆեր, կենտրոններ:

Քննարկման արդյունավետ

վերահսկման առաջարկներ.

- շրջիկ խմբերը՝ որպես տարածքային մակարդակում մանկավարժափոխակազմակազմ աջակցման ծառայությունների մատուցման այլընտրանք.

- շրջիկ խմբերի մասնագետների նոր մրցույթ ու վերապատրաստում կամ առկա մասնագետների սերտիֆիկացած քննություններով վերապատրաստում.

- շրջիկ խմբերի աշխատանքի արդյունավետության բարձրացում, վերահսկողության մոնիթորինգի մեխանիզմի ներդրում և վերահսկողությունը՝ հոգեբանամանկավարժական աջակցման կենտրոնի միջոցով.

- շրջիկ խմբերում ունենալ մեկ մասնագետ, որը կհամակարգի նրանց աշխատանքը և պատասխանատու կլինի աշխատանքի որակի համար.

- շրջիկ խմբերին տրամադրել օրապահիկ, որը կլուծի նրանց ճանապարհածախսի ու սննդի հարցը, և նրանք կկարողանան կանոնավոր այցելել շրջանների համայնքների իրենց կցված դպրոցները:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՃԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՄԵՂԵՐԻ

Նրա զոհվելուց մի քանի ամիս անց ծնվեց փոքրիկ եղմունք: Այսօր որդի եղմունքն իր ծնողներին պարզեց: Երբ հարցվեց՝ «Եղբայր, Բարսեղյան, որը պապի հուշ-ցերեկային պատրաստվել էր բանաստեղծություն արտասանել այսպիսի տողերով.

*Քաջ եղմունքի թռուց են ես,
Նրա նման քաջ եմ ես,
Կապրեմ ես միշտ Արցախում,
Պապիս պահած տուրք հողում:*

Եղմունք Բարսեղյանի հայրը՝ Ալեքսանդր Բարսեղյանը, ցանկանալով որդու վրեժը լուծել, նույնպես պայքարում էր գեներալ ձեռքին: Ավա՞ր, թշնամու գնդակը գտավ նաև նրան:

Մայրը՝ նվիրյալ մանկավարժ երաժարայա Կարապետյանը, որդու կորստյան վիշտը հոգում անթեղած՝ լուռ հայացքով, ոգեղեն կամքով կարողանում էր մի ամբողջ տոհմածառ իր հետևից տանել արժանապատվորեն, իսկական հերոսի ընտանիքին վայել: Ցավոք, նա կյանքին հրաժեշտ տվեց մեկ տարի առաջ:

Ն գործառնալի սերժանտ Արամ Յավրույանն իր ելույթում հայարտորեց նշեց, որ եղմունք Բարսեղյանը հավերժ գրանցվել է 5-րդ հրաձգային վաշտի անձնակազմի ցուցակում: Իսկ Ասկերանի դպրոցի տնօրեն Մարելա Ավանեսյանը հայտարարեց, որ այս ուսումնական տարում բոլոր միջոցառումներում կթօթախի բարձր արդյունքի հասած աշակերտները կարժանանան «Եղմունք Բարսեղյան» մրցանակին, որը շնորհիվ է եղբայրը՝ բարերար Սասուն Բարսեղյանը:

Եղմունքի համար ամենամեծ սրբությունը մայրն էր: Բայց նրա համար մայրը և հայրենիքը նույնական էին, ահա թե ինչու նա վայրկյան իսկ չերկմտեց, երբ հայրենիքը կանչեց, երբ հայրենիքը վտանգի էր ենթարկվել, և թողեց ուսումը Կալինինգրադում, շտապեց տուն, կամավորագրվեց և սկսեց պատրաստվել զինված պայքարին:

Մարտի 8-ն էր. «Բարև, իմ անգին մայրիկ: Այսօր ես շնորհավորում եմ քո՝ աշխարհի սրբություններից մեկի՝ մայրության լիարժեք նարմանացում ներկայացնող մարկի տոն օրը:

Կանանց միջազգային տոն օրը՝ Մարտի 8-ը, չնայած իր ոչ անսահմանափակ անվանը, տոն է բոլորի համար. և՛ ծովերի (նա մայր ունի, եթե ոչ քույր ևս), և՛ պատանու (նա ոգեշնչվում է իր մորով, նա քույր ունի, նա իր հոգու մի մասն էլ պահ է տվել այդ ան-ոխարհից երեխաների սեռի ներկայացուցիչներին, և այսպես կոչված հասուն տղամարդու (որի թիկունքում մայրն է կանգնած, որի դառնությունն ու ուրախությունը քույրն է կիսում, որն իր գավակի մոր հետ նույն օդն է շնչում), և ծերունու (որի սիրտը ուրախությունից ծնվում է մոր լեզուն բացված, ծտի պես թռչկոտող աղջիկ թռանը տեսնելուց)...

Այդ օրը բոլորն են սովորականից շատ անգամ ավելի խորը շոշափվում իրենց ծնած ու փայտաշատ մոր հանդեպ ունեցած երախտագիտության զգացմունքի հետ: Այդ է երկի պատճառը, որ այսօր իմ ունեցած բարձր տրամադրության հետ միասին ես զգում եմ նաև մի անբացատրելի պարտքի զգացման թաթուր ծնունդ: Դա քո հանդեպ իմ ունեցած պարտքն է, պարտք, որը, սակայն, պարտքով չի տրվել, և որը փոխհատուցել անհնար է: Շատ ես չարչարվել ու տանջվել, միշտ ես մտածել ու մտա-հոգվել, երբ չես աշխատել ու կերակրել: Չէ, մենք, թեկուզ քո գավակները, բայց անկարող ենք հասկանալ այն, ինչ դու ես զգում, և ցանկանալ այն, ինչ դու ես ցանկանում: Եվ այսօր քեզ շնորհավորելով՝ ես ցանկանում եմ քեզ (ավելի շուտ ոչ թե ցանկանում, այլ պարզապես արտահայտում եմ ցանկություն, քանզի միշտ եմ ցանկացել) այն ամենը, ինչ դու ես ցանկանում, այն ամենը, ինչի ձգտել եմ աշխարհի բոլոր մայրերի սրտերը: Մամ, քեզ ես չեմ մեծանկ շնորհավորում, քեզ շնորհավորում է ողջ տիեզերքը իր երկիր մոլորակով, որի խաղաղ երկինքը սև ամպերից զերծ պահելու հա-

մար շատ մայրեր են մարտիկներ ծնել: Այս օրը Մայրության օր է, մայրություն, որն իր մեջ ներառում է բնության մեջ եղած ամեն լավագույնը: Մամ, շնորհավորում եմ քեզ այդ գեղեցիկ օրվա առթիվ:

Չամբույրներով՝ քո եղմունք:




ԵՎ ԱՆՑՅԱՆ ԱՄԵՆ ԱՆՎԱՍ ԱՇԽԱՆ ԴԵՏ ԿԱՅՅԵԼԻ...

Եղմունքը որքան հասուն էր գաղափարապես ու քաղաքականապես, քննադատական էր հանդեպ, նույնքան էլ քննարկյալ էր սիրած էակի նկատմամբ: Հուշ-ցերեկային հնչեցին բանակից գրած նրա տողերը սիրած աղջկան՝ Նարինեին: Եվ զուգահեռ հնչող «Մեր սիրտ աշունը» երգի տողերը այնպես ս համահունչ էին ցուցադրվող կադրերին, որ առանց հուզվելու անհնար էր լսել:

Դրանք որքան անձնական, նույնքան և անանձնական են, յուրատեսակ դաս երիտասարդներին:

«Բարև, իմ աշխարհ Այսօր նորից մեզ վիճակվել է իրար հետ լինել: Ուրեմն, գրուցե՛քք առանց հասպաղելու: Այսօրվա գրույցը



սկսե՛ք նրանից, որ քաղաք էի դուրս եկել: Առավոտյան հրամանատարին երկու խոսքով համոզեցի, որ ինձ անհրաժեշտ է այդ քաղաքը դնել, և նա առանց հակաճանաչող բավարարեց ինձ: Դուրս էի եկել տնից ուղարկված փողը ստանալու և քեզ զանգելու նպատակով: Սակայն ոչինչ չստացվեց: Այսինքն՝ փողը ստացա, բայց զանգել չկարողացա: Այս մեծ Լենինգրադում ի վիճակի չեղա գտնել այն փոքր Վիբորգի ունիվերսալ հեռախոսներից մեկի նմանը, որպեսզի զանգեմ: Անհրաժեշտ էր պատվիրել ու սպասել, թե ինչքան, Աստված գիտի: Դե ես էլ վերջապես զինվոր եմ, որի համար արդեն զգալի են հարաբերական ազատության շրջանակները: Այսպես թե այնպես, մի քիչ դես ու դեն արի (այն էլ ոչ առանց կարիքի) և շուրջբոլոր հիմնարկությունից ու վայրենությունից բացի այլ բան չտեսա: Չգիտեմ որտեղ եմ հանդիպել այսպիսի արտահայտության՝ «Բնությունը մարդկանցով է գեղեցիկ»: Հիանալի է ասված: Բայց արդյո՞ք այդպես է: Համաձայն եմ, որ իմ հարազատ Լենինգրադում, որտեղ պարզ երկինք է ու սեզ սարեր, լայնատարած դաշտեր ու կանաչ անտառներ, կոկիկ քաղաքներ ու հյուրընկալ գյուղեր, հասարակ, աշխատավոր, բարոյական մարդիկ, համաձայն եմ, որ այդտեղ թվարկածի ու չթվարկածի միաձուլումն իրոք դառնում է աստվածային հրաշագեղ մի գլուխգործոց, որ այլ կերպ անվանում եմ կյանք:

Սակայն այստե՞ղ... այստեղ ոչ մի կերպ չեմ կարողանում համապատասխանեցնել (վերցնել թեկուզ) գեղեցիկ այս կառույցների բարձր ու հպարտ ծակատները այստեղ թափառող մարդկային տիպի արարածների զգվելի

մոտեցներին: Նայում ես՝ քայլում եմ տղաներ: Մի քանի հոգի են: Բոլորն էլ անկանոն հագնված, քնձռոտված, յուրաքանչյուրի ականջից երկի փիլիսոփայական իմաստ պարունակող մետաղյա շրջանակ կախած: Կարճ կտրենք, քանզի զգվում եմ արդեն, շարունակել հնարավոր չէ: Դրանք իրենց կոչում են մեռֆորմալներ, այսինքն՝ չեն հետևում այսպես ասած բոլոր ձևականություններին: Կատարում են ամեն ինչ հակառակը, եթե մենք սանրվում ենք, նրանք չեն սանրվում, եթե մենք ձգտում ենք հնարավորին չափ կոկիկ հագնվել, նրանք ձգտում են թափփվածությունը անել հանճարեղությամբ:

(Եղմունքը նկարագրում է մարդկանց պահվածքն ու արտաքինը և արտահայտում իր վրդվածությունը): ...Եվ այսպես շարունակ սև ամբողջների նման նրանք կոխկրտում են այս քաղաքը, որն առանց նրանց այնքան



զեղեցիկ կլինե՛ր... ...Չէ, դրանից բան չի դուրս գա: Վտանգավոր է թվում ինձ այդ ամենը, և դեռ ինչ եմ գրել համեմատ նրա, ինչ կատարվում է, պարզապես պատմել եմ այն, ինչ առաջին հայացքից երևում է: Իսկ թե ինչ էր կան իրականում... և որտեղ են դրանց արմատները...

Չէ, մտածել է պետք: Նոր ջան, վերադարձել եմ քաղաքից, հասկանալի է, «զերպագն» տրամադրությամբ, և իմ սկզբունքին հակառակ նստել քեզ նամակ գրելու (չէ՞ որ քեզ գրում էր միայն նորմալ տրամադրություն ունենալու դեպքում):

Արի միասին խորհենք այն համաճարակների մասին, որոնք առես թե պիտի զավթեն երկրագունդը ու կուլ տան անվերադարձ, գտնենք դրանց շարունակ արմատները տանջահարելու ու դրանց խայտառակ ոչնչացելու նպատակով...

...Օ, ինչքան եմ երջանիկ, որ կարողանում եմ քեզ հետ այսպիսի մտքերի շուրջ խոսել, և ինչպես է սիրտս բարտում, երբ զգում եմ, զիտեմ, որ քո թարմ և ի միջի այլոց տաղանդով ներծծված ուղեղը ընկալում է ամեն բան՝ իր մեջ եփելու համար: Եվ երբեմն շատ համեղ կարկանդակներ են ստացվում, որոնցով դու գիշերը զբոսայգում նստարանին նստած ինձ կերակրում ես: Ինչքան եմ ես հպարտանում, երբ դու ինձ օգնում ես, դատում ես, վերլուծում ես նաև:

Դե ինչ ամենք, որ գիժ ենք, երկի մեզ էլ այդքանն է տրված...»: Նամակը վերջանում է բանաստեղծությամբ:

Փայլում է մեկ-մեկ ակնբարթն այն տուրք, Ուղեղիս խորին ծալքերում հանկարծ, երբ քո հայկական, անբիծ ու անուշ

Աչքերին բախվեց հոգին իմ համար: Ու... չտեսնված բան. Այդ լուռ հայացքից հոգիս ծնվեց, Ասես թե խոցվեց ու փլվեց անուշ:

Այդ ի՞նչ էր, երա՞գ Ու չսպասելով պատասխանին զուր ես ենթարկվեցի մի անտեսանելի հսկա ուժի, Որին չգրվել կարո՞ղ ես, արդյոք: Անկարելի է:

Եվ ինչքան, ինչքան, ինչքան էիր դու, Հեռու երևում այքերիս անքուն Եվ ինչքան, ինչքան, ինչքան էի ես Անտեսանելի այքերիդ արթուն, Աչքերդ անքուն, այքերս արթուն Հակված դեպի վառ, արևոտ հեռուն:

Եվ այսպես ես, ահա, ու դու, հոգիս Սակառնում ենք վառ երկնականարում, Իրար պաշտելով, իրարից հեռու Սակայն իրար հետ... և իրարու մեջ Միացել ենք մենք արդեն հավիտյան: Եվ քո այքերը անքուն ու արթուն Ձերծ են պահում ինձ խավարից այս մութ, Որ աշխարհ պիտի խոնարհվի, Կուլ գնա այն սև հրեշիս հզոր, Բայց կան այքերը քո ամենագոր,

Կան, կան նրանք՝ այդ կրակներն անմար, Որ չեն սասանվի իրեջի առաջ, Ու կհաղթեն միշտ բարին, մաքուրը և՛ Շնորհիվ քո վառ, հայոց պահպան թախտոտ այքերի...

Դե, հաջող: Քեզ միշտ սիրող, քո սիրով վառվող՝ Մի տղա:

Հուշ-ցերեկային ավարտին ելույթ ունեցավ ԱՀ ԿԳՍ Ճախարար՝ Է. Բարսեղյանի այդի Նարինե Աղաբալյանը: Նա եղմունքի ըն-

տանիքի կողմից շնորհակալական խոսք ասաց դպրոցի կոլեկտիվին ոչ միայն նրա համար, որ այդպես պատվում և հարգում են նրա հիշատակը, այլև նրա համար, որ եղմունքի գաղափարը և սկզբունքները ուղեկցել են դարձրել մատաղ սերնդի համար. «Ամեն անգամ, երբ անհանճախ է լինում մայր Հայաստանում և Արցախում, ու իմենք ստանալիք օրեր ենք ապրում, ինքս ինձ հարցնում եմ՝ ի՞նչ կլինե՛ր, եթե եղմունք, Սամվելը, Լյուվան, Աշոտ-Բեկորը, Լեոնիդ Ազգալոյանը, Ավրոն ողջ մնային: Ո՞ր ճանապարհով մենք կգնայինք, ու՞ր կհասնե՛նք: Դժվար է գուշակել, միայն մի բանում եմ համոզված, որ հաստատ մենք ավելի քիչ սխալներ կգործենք: Ազնվագույն այդ տեսակը մեր մեջ պահպանելու և տարածելու խնդիր ունենք: Այսօրվա մեր երեխաները այդ նույն գեների կրողն են: Ողջերիս համար շատ մեծ պատասխանատվություն կա դրված՝ պահել-պահպանել այն ամենը, ինչ ձեռք ենք բերել այսքան թանկ գնով»:

Նա շնորհակալություն հայտնեց եղմունքի մարտական ընկերներին, որ այսքան տարիներ հավատարիմ են մնացել իրենց ընկերությանը, ասկերանցիներին, որ միշտ այդպես հիշում և հարգում են նրա հիշատակը, Պաշտպանության բանակին՝ սահմանի կանգնած զինվորից մինչև հրամանատար, որ անառիկ են պահում սահմանը և աչքի լույսի պես են պահում մեր անկախության նվաճումները:

Քանի որ եղմունքի ծնունդը համընկել էր Ուսուցչի օրվան, Ն. Աղաբալյանը շնորհավորեց ուսուցիչներին մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթելով ուժ և կորով: Այդ նրանք են իրենց ամենօրյա աշխատանքով ստեղծում միջավայր, որը ծնում է եղմունքներ:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴՈՒ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ ԵՍ, ԷԴՄՈՆ

Ամեն առավոտ դպրոց մտնելիս Քո պարզ հայացքն է միշտ մեր դեմ հառնում, Ողջունում ես մեզ ու վստահորեն Բարի դասաժամ բոլորիս մաղթում:

Հերոսներ մեր հողը շատ է ծնել, Ուժեղ, խելացի և քաջակորով, Բայց մեր դպրոցի օրը լուսավոր Լցված է հերոս եղմունքի ոգով:

Բոլոր դասերին մեր ուսուցիչների Օրինակները եղմունք են միշտ, Այնպես հարգատ է բոլորիս դարձել, Որ թվում է՝ դասարանում է:

Մեր ոգեշնչումն է, Մեր հպարտությունը, Չափանիշը մեր գերազանցության ու հիացմունքը աշակերտության:

Ասում եմ, թե նրա համար ամեն ինչ հեշտ էր, Փայլում տիրապետում էր մաքեմատի կային, ֆիզիկային, քիմիային և բոլոր մյուս առարկաներին, Իսկ թե սպորտում ինչպես էր փայլում, Ուսուցիչներն են մեր միշտ վկայում. Ճարպիկ էր, ուժեղ ու ամուսկան Բոլոր մրցույթների առաջատար տղան, Իր բաժինն էր նա արագ կատարում, Ընկերներին էլ՝ հետևից տանում: Չէր ներում երբեք նա ծուլությունը, Ոգեշնչում էր զբաղվեն սպորտով, Կոփված լինեն ու պատրաստ լինեն, Հայրենի հողի պաշտպանը լինեն:

Արդ ԳՅԱՆԶՈՒՄՅԱՆ Ասկերանի էր. Բարսեղյանի անվան միջև. դպրոցի փոխտնօրեն

ԽՆԿԱՐԿՈՒՄ

«ԽՈՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ԱՌԱՋ»



Քանի՞ ծեռքից են վառվել, վառվել ու հուր են դառել, Գուր են դառել՝ լույս տվել, Լույս տալով են ըսպառվել...

Կան մարդիկ, որոնք կրելով ճակատագրի դաժան հարվածները, շրջապատին տալիս են լույս ու ջերմություն: Այդպիսի մի անհատակություն էր մեզ բոլորիս սիրելի Եպրաքայա Կարապետյանը: Շուրջ 30 տարի դասավանդելով դպրոցում՝ նա ցուցաբերել է մասնագիտական բարձր վարպետություն, անմնացորդ նվիրում, վաստակել է սեր և հարգանք և՛ կուրսի-տիպի, և՛ սաների կողմից: Արժանապատիվ հայրուհի, առաքինի անձնավորություն, հմուտ և գիտակ դասավար: Ուներ անդունդի խորություն, լայն հոգի, մեծ սիրտ, մեղմ բնավորություն: Իր սաների հետ նա սիրով մանկանում էր, նրանցով հպարտանում: Ես համամիտ եմ այն մտքին, որ ուսուցիչը և՛ կոչում է, և՛ միաժամանակ մասնագիտություն: Յուրաքանչյուր մարդու կյանքում մեծ է ուսուցչի, հատկապես առաջին ուսուցչի դերը անհատի ձևավորման գործում, ու պատահական չէ, որ մարդկանց հիշողություններում միշտ վառ է մնում այդ կերպարը: Լավ ուսուցիչը դպրոցում փոխարինում է ծնողին: Նրա միջոցով է երեխան հաղորդակից դառնում շր-

ջապատին, աշխարհին, և նրա խոսքը միշտ երեխայի համար ուղեցույց դառնում: Առաջին ուսուցչի տվորեցրած ուղեցույցի աշխարհում իմացությունը ունի բանալի է յուրաքանչյուր աշակերտի համար, որը կօգնի հետագայում բացելու ցանկացած փակ դուռ: Ավելի քան 40 տարի է, ինչ ավարտել եմ դպրոցը: Երկար տարիներ է՝ աշխատում եմ Ասկերանի Էդ. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում, սակայն իմ հիշողություններից երբեք չեն անցնում դպրոցական տարիներս, և դա՛ շնորհիվ իմ սիրելի ուսուցչուհի ընկեր Կարապետյանի: Ես այն երջանիկներից եմ, ում բախտ է վիճակվել աշակերտել այդ մեծատառով ուսուցչին (նա նաև իմ անդրամիկ որդու առաջին ուսուցչուհին էր և միշտ սասուն էր. «Գիտե՞ս, թոռնիկիս եմ դասավանդում»): Նա կրթել ու դաստիարակել է բազմաթիվ սաների, որոնք այսօր գտել են իրենց արժանի տեղը կյանքում: Նրանք լավագույն բժիշկներ են, ուսուցիչներ, իրավաբաններ, պետության ղեկավարներ, լավ մարդիկ: Մինչև օրս նրա բոլոր սաները սիրով ու կարոտով են հիշում իրենց ուսուցչին, անգամ նրանք, ովքեր չեն աշակերտել նրան: Բոլորի համար նա միշտ եղել ու մնում է որպես ընկեր Կարապետյան, ում ճանաչել են ոչ միայն մեր քաղաքում, այլև ողջ շրջանում և հանրապետությունում: Եպրաքայա Կարապետյանը մանկավարժի փառավոր ուղին սկսել է Քարազուկի յոթնամյա դպրոցից: 1954-ից մինչև 1993 թվականն աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում: 30 տարի անընդմեջ Ասկերանի շրջանի և Ասկերանի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների մեթոդավորման նախագահն էր: Ուսուցչական «Մանկավարժ»

թերթի խմբագրի անդամ էր, շրջանային կինոխորհրդի նախագահը, մանկավարժական խորհրդի մշտական քարտուղարը: Ե. Կարապետյանը ԼՂԻՄ մարզոժողկրթաժնի կողմից նշանակվել է մարզի ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովի անդամ: 1960թ. մասնակցել է Ուսուցիչների հանրապետական 4-րդ համագումարի աշխատանքներին ու պարգևատրվել «Աշխատանքային արիության համար» մեդալով: 1971թ. ժՏՆՏ-ի կողմից պարգևատրվել է բրոնզե մեդալով, 1976թ.՝ «Պատվո Նշան» շքանշանով, 1978թ.՝ «Հանրապետության լուսաշխատողների գերազանցիկ» կրծքանշանով, 1981թ. արժանացել է «Ավագ ուսուցիչ» կոչման, իսկ 2000թ. նրա անունը տեղ գտել 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժների ցուցակում: Արժանապատիվ մարդ, ով կարողացել է հաղթահարել կյանքի մատուցած բոլոր մարտահրավերները, աշխարհին նայել հաղթողի բարձունքից: Արցախյան պատերազմն իր անդամալի հետքը թողեց Եպրաքայա Կարապետյանի կյանքում: Նա Արցախ աշխարհին տվեց իսկական հերոս, ով իր կյանքի յուրաքանչյուր վայրկյանը նվիրեց հայրենիքին: Այդ հերոսը մեզ բոլորիս սիրելի էր՝ ում անունն է կրում Ասկերանի միջնակարգ դպրոցը: Բավական է մի դրվագ նրա հերոսական արարքից, որ պատերազմում կազմեց, թե ով էր նա՝ կենդանի լեզենդը: Էրձոնը ուներ մարտական հանձնարարություն, որը խիստ վտանգավոր էր: Քաղաքի կենտրոնում պետք է պայթեցնեին «ՈւԱԶ» մակնիշի ազդրների ավտոմեքենան (այդ այն օրերն էին, երբ ռուս զինվորները վահաններով ու ռետինե մահակներով կանգնած

էին հրապարակում): Մեքենան պայթեցրին «Պյատաչոկ» կոչվող տեղամասում: 1991թ. օգոստոսի 28-ը վերջին մարտն էր Էրձոնի համար: Նա կնքեց իր մահկանացուն, գնաց միանալու մեր նահատակների հոգիներին աստղաբույլին՝ մեծ վշտի մեջ թողնելով հարազատներին: Ու չնայած ճակատագրի հասցրած ծանր հարվածին՝ մայրն արժանապատվորեն ընդունեց ու տարավ այդ մեծ կորուստը: Որդուն կորցնելուց հետո նա երբեք չչարացավ Աստոն դեմ, չմեղադրեց ոչ ոքի, իր մեջ ուժ գտավ, մի կերպ հոգու խորքում խեղճեց անձնական ցավը և դրանով ապացուցեց, որ հերոս որդի է ծնել ու դաստիարակել նախ հայրենիքի և հետո՝ ծնողների համար: Իսկ նահատակ որդին ապացուցեց, որ արժանի գավակն է իր հայրենիքի ու հայրենասեր ծնողների: Մենք պետք է հպարտանանք, որ ունեցել ենք Էրձոնի նման հերոս տղաներ և Էրձոն ծնող հերոս մայրեր: Մեր պարտքն է հարգել ու պատվել նման լուսավոր մարդկանց: Ամսահամառ բարի, ազնիվ, մանկավարժական անսպառ էներգիայով լեցուն մարդու՝ Եպրաքայա Կարապետյանի հիշատակը վառ կմնա նրա բազմաթիվ աշակերտների, գործընկերների սրտերում: Նրա խորհուրդները, տված պատգամները միշտ կառաջնորդեն մեզ, կսովորեցնեն ապրել այնպես, ինչպես ապրել ու արարել է մեր մեծ մանկավարժը, մեր մեծ խորհրդատուն ու բարի ընկերը: Իմ առաջին ուսուցչուհի՛ և գործընկեր, խոնարհվում եմ քո առաջ...

Մագուկա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ասկերանի Էդ. Բարսեղյանի անվան
միջն. դպրոցի հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՈՐՊԵՏ ՀԱՎԵՐԺԱԽՈՍ ՀՈՒՆԱՂԲՅՈՒՐ



Ամեն մարդ մի պատմություն է, որը նման չէ մի ուրիշ պատմության: Կարել

Նա մանկավարժ էր, ազգի ապագայով մտահոգ քաղաքացի, ազատամարտիկ, պարտքի ու պատասխանատվության մարմնացում, լավ ընկեր ու հոգատար հարազատ: Կենսախիմնո ու կյանքով լեցուն մարդ էր՝ հայրենիքին դեռևս ծառայելու վճռակամությամբ: Շատ ծրագրեր ուներ, բայց... Շահեն Աղաբաբյանը ծնվել է 1957թ. օգոստոսի 22-ին Ասկերանի շրջանի Խնամապատ գյուղում: 1964թ. հաճախել է հարազատ գյուղի միջնակարգ դպրոցի առաջին դասարան, 8-րդ դասարանից տեղափոխվել է Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոց և այն ավարտել 1974-ին: 1975թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը, որն ավարտել է 1979 թվականին: Նույն թվականին նշանակում է ստացել Խնամապատի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ, 1984-ին եղել է ուսմանավար մինչև 1991 թվականը: Աշխատանքին զուգահեռ զինվորագրվել է գյուղի ինքնապաշտպանական ջոկատին: 1992-ի սեպտեմբերի 1-ից ծառայության է անցնում

արդեն կազմավորված ԼՂՀ ՊԲ ԳՕՊ-ում՝ որպես հաշվարկի հրամանատար մինչև 1993թ. մարտ ամիսը, հետո պաշտպանության նախարարի հրամանով տեղափոխվում է 4-րդ պաշտպանական շրջանի գնդի ԳՕՊ ծառայություն՝ պետի պաշտոնով և աշխատում մինչև 1994թ. հոկտեմբերի 30-ը: Այնուհետև գորացրվում է ու կրկին անցնում մանկավարժական գործունեության. հայրենի դպրոցում ուսմանավար է աշխատում մինչև 1995թ. մայիսը: Մայիսի 15-ից տեղափոխվում է Ասկերանի շրջանի կրթության բաժին՝ սկզբից որպես գլխավոր մասնագետ, հետո՝ բաժնի վարիչի տեղակալ, իսկ 1996-ի մայիսից՝ բաժնի վարիչ մինչև 1997-ի մարտ ամիսը, 1997-ից՝ մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ: 2008-ին, երբ միավորվում են կրթությունը, մշակույթը և սպորտը, նշանակվում է տեղակալ, 2012-ից՝ բաժնի վարիչ: Մեծ էր նրա ակտիվությունը հատկապես Արցախյան շարժման տարիներին. գաղտնի ստորապատրաստված, ցույցեր, հանրահավաքներ, թռուցիկների տարածում, գաղտնի տեսակցություններ Շարժման ակտիվիստների հետ (Սլավիկ Առուշանյան, Մարտա Հակոբջանյան, Ալբերտ Ավանեսյան), «Ամարաս» բարեգործական կազմակերպության Խնամապատի տարածքային խորհրդի նախագահ: Մանկական պարզությանը էր խոսում 1988-ին գյուղ այցելած հունահայ Գևորգ Պյետրի մասին: Վերջինս, ռեպորտաժ Արցախյան շարժման գաղափարներով, Խնամապատ էր այցելել՝ անձամբ ողջունելու, ոգևորելու, մասնակցելու նպատակով: «Գյուղում առաջին գունավոր մոնիթորով համակարգիչը հայտնվել է նրա հետ: «Երբ առաջին անգամ միացրել է համակարգիչը, և էկրանին հայտնվել է հայոց

եռագույնը՝ դաշնակցության հիմնի հնչյունների ուղեկցությամբ, երեխայի պես հրճվում էինք»,- պատմում էր Շահեն Աղաբաբյանը: 1988-ի փետրվարի 22-ի Ասկերանի հայտնի դեպքերից հետո դպրոցի տղամարդ ուսուցիչները (Չավեն Բեգլարյան, Շահեն Աղաբաբյան, Արթուր Հայրապետյան, Կառլեն Մալիյան, Սլավիկ Մելքունյան, Սամվել Հակոբյան) հասկանում են, որ հիմնախնդիրը հնարավոր չէ խաղաղ ճանապարհով լուծել: Անհրաժեշտ էր պաշտպանական միջոցներ գտնել: Եվ դպրոցի արհեստանոցի հաստոցները սկսում են աշխատել զուտ պաշտպանական նպատակով. դպրոցում առկա ուսումնական զենքերը բերվում են մարտական տեսքի, իսկ փորձարկումներն իրականացվում էին դպրոցի մոտ գտնվող ծորուն կամ «Շորեն ծորունը»: Սակայն տղաների գործունեությանը սկսեց խոչընդոտել դպրոցի մի թևում տեղակայված ԽՍՀՄ ԱՌԻ հատուկ ստորաբաժանը: Ստիպված էին համագործակցել նրանց հետ՝ հետապնդելով 2 նպատակ. 1) տեղեկություններ ձեռք բերել Աղաբաբյանի տեղակայված իրենց ծառայակիցներից. 2) ընկերակցելով՝ ապահովել ընդհատակում գործող մանկավարժների անվտանգությունը: Երկրորդ հարցում, սակայն, հուսախաբությունը չուշացավ: Հաջորդ օրն իսկ խոջալուում Շահեն Աղաբաբյանին և Սլավիկ Առուշանյանին բռնում են անցակետում ու տեղափոխում Բերքածորի (այն ժամանակ՝ Հասանաբաղ) ֆիլտր-մեկուսարան: Շ.Աղաբաբյանը, կարողանալով լեզու գտնել նրանց հետ, Սլավիկի մեքենայով գալիս է Ասկերան, մասնակցում հանրահավաքին, հետո դպրոցի ստորաբաժանման հրամանատարներից մեկի օգնությամբ ազատում Սլավիկին:

Իր իսկ բնորոշմամբ՝ նրա կյանքի ամենածանր օրը 1992թ. հունիսի 12-ն էր: «Այդ օրը, ցավով նշում է նա, տղաներով դպրոցամերձ հողամասում գյուղատնտեսական աշխատանքներ էինք կատարում: Հանկարծ մեր գլխավորում հայտնվում է հակառակորդի սև անգղը՝ ռմբակոծիչը, պտույտներ գործում գյուղի և Ասկերանի օդային տարածքներում, ռումբերը նետում ու անհետանում: Արթուրը, որին քաջ ծանոթ էին ռազմի մարտավարական կանոնները, իսկույն գնահատում է իրավիճակը. «Սա շարունակություն է ունենալու...»: Խոսքը դեռ չէր ավարտել, երբ գյուղի վրա գրադ կայանքից արկերի կարկուտ է թափվում: Սկսվում է իրարանցումը. լաց ու կոծ, գոհեր (այդ իրենականության հետևանքով 3 զինվոր է զոհվում (Արմեն, Պավել, Յուրիկ): Արթուրը կռահում է ոտիսի հերթական քայլը. «Շուտով կսկսվի լայնամասշտաբ հարձակումը...»: Եվ չէր սխալվում: Երեքով շտապ հասնում են գարձանները, Արթուրը արագ ստանում է զենքը ու հասնում ռազմի դաշտ՝ դիմակայելու երկաթե հրեշներին, որոնք դեպի գյուղ էին շարժվում... Հետո՝ ամենածանր հարվածը. չկար մեր սիրելի ընկեր Արթուրը: Շաբաթներով չէի կարողանում ուշքի գալ: Երբ երեկոյան ամփոփում էինք օրվա չորս զոհերին, Սլավիկն Արթուրի գերեզմանի մոտ ասաց. «Արթուր, մեզ էլ է նույնը սպասում...»: Ուղիղ 10 օր անց՝ հունիսի 23-ին, Սլավիկ Մելքունյանն արդեն Արթուրի մոտ էր... Առաջինը իմ լավ ընկերն էր, երկրորդը՝ հարազատս՝ մորաքրոջս տղան: Այս ծանր հիշողություններն արդեն քանի՞ տարի հանգիստ չեն տալիս ինձ... Ասեմ ավելին, այն տարիներին, ինչքան էլ նվիրված էինք մեր սուրբ գործին, այնուամենայնիվ,

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԺԵԼՆԵՐ

ՄԵՆԵՐՆ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ԱՊՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ

Ամենամյա Մուրացանյան օրերի շրջանակում Ասկերանի շրջանի խաչեն գյուղի դպրոցում բացվեց ակադեմիկոսներ Սերգեյ Սարիյանի և Սևակ Արզումանյանի թանգարանի բացումը:

Դպրոցականներն այս գոյություն ունեցող կոմունիստական դպրոցում ու գործունեությանը, նրանց թողած մեծ ժառանգությանը, ակադեմիկոս կյանքն անտեղի դաս ու պատգամներին: Թանգարանը խորհրդանշական մի վայր է, որտեղ հետաքրքիր հանդիպումներ կկազմակերպվեն,

մեջ, պատասխանատվություն ենք կրում մեր մեծերի առաջ, և նրանց այսպեպ պատվելը յուրօրինակ պարտք է:

ԱՅ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Յուրիանիսյանն անդրադարձավ Արցախի գյուղերի հարուստ պատմամշակութային ժառանգությանը, նշելով, որ պետք է այդ ժառանգությունը փոխանցվի գալիք սերունդներին, որպեսզի իմանանք ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ինչ գաղափարախոսության կրողներ ենք: Հողը ծնունդ է տալիս մեզ, և հենց նրանք էլ հզորացնում են հայրենիքը, շեշտեց նախարարը:

Թանգարանի բացմանը ելույթ ունեցան նաև բանասիրական գիտությունների դոկտորներ Պետրոս Դեմիրճյանը և Սոկրատ Խանյանը, ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Ջինաիդա Բալայանը: Միջոցառման ընթացքում առաջարկ եղավ ստեղծել երկու վաստակաշատ գրականագետների մասին պատմող հուշերի գիրք:

Վերջում տեղի ունեցավ Սերգեյ Սարիյանի «Հայոց գրականության երկու դարը» 7-րդ հատորի և բանասիրական գիտությունների թեկնածու Անայա Գրիգորյանի հեղինակած «Բառը ժամանակի գուգահեռականներում» ու «Գեղագիտությունը և բանաստեղծությունը. Սարիյանի հետ» գրքերի շնորհանդեսը:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



հիշատակի խոսքեր կհնչեն, քանզի մեծերն ապրելու և ապրեցնելու հատկություն ունեն, իր ելույթում նշեց նախարար Սարիյանը:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը և բարձր գնահատելով երկու մեծանուն գրականագետների վաստակը, համոզվում էր հայտնեց, որ բոլորս գտնվելով նույն գրական տարածության

Շնորհավորանք ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒԻՊ, ՀՈՒՐԵԼՅԱՆՐ



Վ ա լ է թ ի կ Մանգասարյանը ծնվել է 1948 թվականի սեպտեմբերի 24-ին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: Դեռ մանկուց նրան վիճակված էր կոպիլե՝ դժվարությունների միջով անցնելով:

Վաղ տարիքում կորցնում է հորը, և նրա խնամակալությունը ստանձնում են հորական տատն ու պապը՝ Ուսուբ և Սիրանուշ Մանգասարյանները: 1956-1957 ուստարում ընդունվել է Վաղուհասի միջնակարգ դպրոցը: Ուսումն ավարտելուց հետո 1969 թվականին ընդունվել է Երևանի Ակսել Բակունցի անվան հայկական մանկավարժական ուսումնարան և ստացել «Հանրակրթական դպրոցի տարրական դասարանների դասավանդում» մասնագիտությունը: Ավարտելուց հետո 1972-1973 ուստարում աշխատանքի է անցել Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: 1977-1978 ուստարում տեղափոխվել է Վաղուհասի միջնակարգ դպրոց՝ որպես դասվար:

Ուսումնատեղից ոգին շարունակում է պրպտումները, և 1982-1987թթ. սովորում և ավարտում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունը:

Հայրենասեր մանկավարժն իր գործունեությունը չդադարեցրեց նույնիսկ պատերազմի մահաշունչ օրերին: 1992թ. աշխատանքի է անցել բռնազարթած երեխաների համար բացված Ջառեն Բաղ տեղամասի (Ստեփանակերտ) դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1993 թվականին գորակոչվել է ռազմաճակատ և մասնակցել Մաղափուզում և Օմարում մղվող ռազմական գործողություններին: 1994 թվականին աշխատանքի է անցել ազատագրված Վաղուհասի միջնակարգ դպրոցում:

2007 թվականին ԼՂՀ նախագահի թիվ 18 հրամանագրով պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Վալերիկ Մանգասարյանն ակտիվ գործունեություն է ծավալել Վաղուհասի դպրոցում: Ջանք ու եռանդ չխնայելով՝ նա իր ողջ գիտելիքները, համեմված արցախյան առած-ասացվածքներով, փոխանցել է իր սաներին: Այսօր էլ թոշակառու ուսուցիչը վայելում է ուսուցիչների և աշակերտների սերն ու հարգանքը: Վաստակաշատ ուսուցիչն իր մանկավարժական գործունեությունն ավարտել է 2016 թվականին:

Մրտացավ և բանինաց Վ. Մանգասարյանը յուրաքանչյուր պահի պատրաստ է օգնել ու աջակցել բոլորին: Գյուղում առանց նրա՝ սեղանապետի մեծ վարպետության, չի նշվում ոչ մի խնջույք: Նրա հունորն ու ասունքելու հմտությունը ժպիտ ու հաճելի ժամանց են պարգևում բոլորին:

Այսօր 70-ամյա Վ. Մանգասարյանը չի կորցրել երիտասարդական տարիների ուժն ու ամլունը: Նա շարունակում է իր գիտելիքները փոխանցել և իր խորհուրդներով ճիշտ ուղի ցույց տալ մատաղ սերնդին:

Վաղուհասի Գ. Մուրացանյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմը շնորհավորում է Վ. Մանգասարյանին՝ 70-ամյակի կապակցությամբ և մաղթում առողջություն, հոգու տոկունություն, անսպառ եռանդ, անհոգ ծերություն:

Վաղուհասի Գ. Մուրացանյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿՅԱՆԷ՝ ԳՐԵՐԻ ՄԵՋ ԵՎ ԳՐԵՐԻ ՀԵՏ



Արցախի գրողների և ժուռնալիստների միությունների համատեղ կազմակերպած հուշ-ցերեկույթը նվիրված էր գրող, մանկավարժ և իրավաբան Վոլոդյա Ստեփանյանին, որի ծննդյան 70-ամյակը լրացել էր շաբաթներ առաջ:

Միջոցառման վայրը Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանն էր, որտեղ տարիներ շարունակ իրավաբանություն էր դասավանդում Վ. Ստեփանյանը:

Ինչպես բացման խոսքում նշեց ԳՄ նախագահ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը, Վոլոդյա Ստեփանյանը բնավորությամբ լինելով համեստ անձնավորություն, շոշափելի հետք է թողել թե՛ Արցախի գրական-մանկավարժական և թե՛ դատասիրական բնագավառներում:

Վոլոդյա Ստեփանյանի կյանքի ու գործունեության մասին համառոտ ներկայացրեց ԺՄ նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանը, որը քառորդ դարից ավելի եղել է Վ. Ստեփանյանի մտերիմ ընկերը: Նրանց համատեղ հեղինակությամբ է գրվել «Սեր և արյուն» դեպտեկտիվ վիպակը, որն Արցախի գրական հունձքում առաջին երկհեղինակ ստեղծագործությունն է և ժամանակին դրական արձագանք է գտել ընթերցողների մոտ:

Վ. Ստեփանյանը երկար տարիներ ծառայել է Արցախի ներքին գործերի մարմիններում, ունեցել է միլիցիայի գնդապետի կոչում: Ղարաբաղյան պատերազմի տարիներին նա համակարգել է ԵԳ մարտական ջոկատների մասնակցությունը ռազմագործողություններին, ընդ որում՝ ծառայողական պարտականություններն իրականացնելիս նույնիսկ պատանդ է վերցվել ազերիների կողմից, խոշտանգման ենթարկվել: Երկարամյա ծառայությունից հետո թոշակի անցնելով՝ որոշ ժամանակ եղել է ԼՂՀ ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատավոր, որից հետո փաստաբանական աշխատանքի է անցել: Այդ ընթացքում զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասախոսելով ԱրՊՀ-ում և «Գրիգոր Նարեկացի» համալսարանում: Հատկանշական է, որ Ստեփանյանը հասցրել է նաև զբաղվել գրական գործունեությամբ. հեղինակել է վեց ժողովածու, որոնք պատշաճ գնահատանքի են արժանացել Արցախում և նրա սահմաններից դուրս:

Ինչպես իր ելույթում նշեց բանախոսը, Վ. Ստեփանյանը իրավամբ հանդիսանում է Արցախում դեպտեկտիվ ժանրի միակ հեղինակը, և դա օրինակալի ու տրամաբանական է: Կ. Գաբրիելյանի մեկնաբանմամբ՝ Ստեփանյանը լավ էր ճանաչում քրեական աշխարհը, քանզի տասնամյակներ շարունակ նա անգիջուն պայքար է մղել հանցավորության դեմ: Նրա պատմվածքների և վիպակների հերոսներն իրական մարդիկ են, որոնց հետ երբևէ չվիճվել է ծառայության բերումով: Գեղարվեստական կերպավորում տալով այդ անձանց՝ գրող-իրավաբանը միաժամանակ դաստիարակչական խնդիր է նպատակադրում: Ստեփանյանի ընկալմամբ՝ մարդը հանցագործ չի ծնվում, նրան այդպիսին են դարձնում հանցանքները և ոչ հազվադեպ՝ շրջապատի անտարբեր վերաբերմունքը: Միշտ էլ կարելի է կյանքի արահետից շեղված մարդուն դարձի բերել, գտնում էր գրողը, և դրա մի օգտակար միջոց էլ հանցագործություն կատարած անձի մեջ հասարակությանը դեռևս պիտանի լինելու ներուժը բացահայտելն է: Պատմակրման վայրից վերադարձած բազմաթիվ նախ-



նը լավ էր ճանաչում քրեական աշխարհը, քանզի տասնամյակներ շարունակ նա անգիջուն պայքար է մղել հանցավորության դեմ: Նրա պատմվածքների և վիպակների հերոսներն իրական մարդիկ են, որոնց հետ երբևէ չվիճվել է ծառայության բերումով: Գեղարվեստական կերպավորում տալով այդ անձանց՝ գրող-իրավաբանը միաժամանակ դաստիարակչական խնդիր է նպատակադրում: Ստեփանյանի ընկալմամբ՝ մարդը հանցագործ չի ծնվում, նրան այդպիսին են դարձնում հանցանքները և ոչ հազվադեպ՝ շրջապատի անտարբեր վերաբերմունքը: Միշտ էլ կարելի է կյանքի արահետից շեղված մարդուն դարձի բերել, գտնում էր գրողը, և դրա մի օգտակար միջոց էլ հանցագործություն կատարած անձի մեջ հասարակությանը դեռևս պիտանի լինելու ներուժը բացահայտելն է: Պատմակրման վայրից վերադարձած բազմաթիվ նախ-

կին դատապարտյալներ անձամբ շնորհակալություն են հայտնել գրողին՝ շեշտելով, որ նրա գրքերն էապես նպաստել են վերադարձվելու, և այս հանգամանքը ևս ընդգծում է Վոլոդյա Ստեփանյանի գրական վաստակը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանն անդրադարձավ Վ. Ստեփանյանի ստեղծագործության յուրահատկություններին՝ այդ շրջանակում նշելով գրողի ամխառն ոճը, գտնված թեմատիկան և նյութի գերազանց իմացությունը: Ծշնարտագրությունը գրողի առանձնաշնորհն է, որով էլ նա մնում է յուրատիպ գրական-գեղարվեստական հարթությունում:

Վ. Ստեփանյանի մարտական ընկեր, տեխնիկական գիտությունների թեկնածու Գեղամ Միքայելյանը պատերազմական հուշեր պատմեց՝ կարևորելով Վոլոդյայի անուրանալի խիզախությունը և մարդկային շիտակությունը, իսկ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավունքի ամբիոնի վարիչ Սոնա Համբարձումյանը երախտագիտության խոսքեր հնչեցրեց՝ հավաստիացնելով, որ ուսանողները հարգանքով են հիշում իրենց նախնին դասախոսին:

Հուզիչ էր Վոլոդյա Ստեփանյանի թոռնուհի Մարիամ Ստեփանյանի ելույթը: «Ես ուրախ եմ, որ իմ պապիկի մասին այսքան բարձր գնահատականներ հնչեցին: Հպարտանում եմ, որ ունեցել եմ տաղանդավոր ու հայրենասեր պապիկ և կծգտեմ կյանքում իրականացնել նրա պատգամները», - ասաց նա:

Վերջում տեղի ունեցավ Վ. Ստեփանյանի նորահրատարակ գրքի շնորհանդեսը: Գրքի ազդագիրը լույս էր տեսել հեղինակի մահվանից օրեր առաջ, բայց ընթերցողի սեղանին է դրվել նրա մահվանից հետո: Գրողի ստեղծագործությունների հատընտիրը ներկայացրեց ԳՄ նախագահ Վարդան Հակոբյանը: Ծնորհակալություն հայտնելով գրքի հրատարակիչներին՝ նա վստահություն հայտնեց, որ Վոլոդյա Ստեփանյանը շարունակելու է մնալ որպես պահանջված հեղինակ, քանզի նրա ստեղծագործության մարդասիրական ուղերձները հղված են ապագային: Գրողն ապրելու է իր գրքերի մեջ և իր գրքերի հետ:

Սեփ. լրատվություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՌԹԱՆԱԿՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ, ԹԵ՞...



Հոկտեմբերի 6-7-ը Էջմիածնում կայացած 33 մուայ-թայի ֆեդերացիայի «Չեմպիոն» ակումբի բաց առաջնությանը մասնակցեցին նաև մարզիկներ Արցախից ու վերադարձան գոհացուցիչ արդյունքներով: Սկսած 6-7 տարեկանից ու մինչև 18+ տարիքային բոլոր խմբերում մենամարտած 18 մարզիկից 8 հոգի գրավել է 1-ին տեղ: 5 հոգու հաջողվել է զբաղեցնել 2-րդ, իսկ երկու հոգի արձանագրել է 3-րդ տեղ: Առաջնությանը մասնակցում էր 110 մարզիկ 33 բոլոր մարզերից: Մեր մարզիկների ցուցաբերած արդյունքներն ամփոփեցինք, ինչպես նաև մարզածելի առանձնահատկությունները, առկա խնդիրներն ու նպատակները քննարկեցինք Արցախի մուայ թայի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ Ալեքսան ԱՂԱՔԱՆԻ հետ:

լուց (ֆիզկուլտուրա եւ նախնական զինական պատրաստություն) եւ զինվորական ծառայությունն ավարտելուց հետո սկսել է զբաղվել մարզական գործունեությամբ: 2012 թվականից աշխատում է Ստեփանակերտի ՄՊՍԴ-ում՝ որպես մուայ թայի մարզիչ: Ներկայումս նրա մոտ մարզվում է շուրջ 90 մարզիկ: Ալեքսան Աղաքալյանը 33 բազմակի չեմպիոն է, միջազգային մրցաշարերի հաղթող, 33 եւ Ա3 պրոֆեսիոնալ մենամարտերի հաղթող, K-1 մարզածեղով աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր (2015թ.), աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր (2016թ.), Եվրոպայի առաջնությունների մասնակից:

- Ալեքսան, ինչպիսի՞ մարզածել է մուայ թայը:

- Մուայ թայը թայլանդական բռնցքամարտ է, որն առանձնանում է չոր ու կոպիտ տեխնիկայով: Ի տարբերություն բռնցքամարտի, այստեղ թույլատրվում են ոտքի հարվածներ: Մարզիկները սովորում են հարվածներ կատարել ուժ վերջույթով: Հաճախ մուայ թայն անվանում են նաև «ուժ վերջույթի» մարտ: Աշխարհում տարածված սպորտաձևերի մեջ մուայ թայն առաջատար է համարվում: Աշխարհում հայտնի պրոֆեսիոնալ մարզիկներից շատերը նախապատվություն են տալիս այս մարզաձևին:

- Ներկա գտնվելով Ստեփանակերտում մուայ թայ մարզածելից անցկացվող մրցաշարերին՝ նկատում ենք մարզիկների մոտ տիրապետող անուր ոգին, մարտականությունը: Արդյո՞ք բոլոր դիմորդները կարող են զարգացնել իրենց մեջ այդ հատկությունները, թե՞ ընդունում եք հատուկ ընտրություն:

- Մուայ թայում չկան սահմանափակումներ ընդունելության վերաբերյալ: Ընդունում են բոլոր ցանկացողներին: Սկզբնական շրջանում հատկապես փոքր հասակի մարզիկներին սովորեցնում ենք զգույշ լինել այնպիսի վնասվածքավտանգ մարզա-

ծելով պարապելիս, ինչպիսին մուայ թայն է: Մարտերի ժամանակ օգտագործում ենք հատուկ պաշտպանիչներ: Պարապմունք առ պարապմունք կոփվելով՝ մարզիկը դառնում է ինքնավստահ, հավատում է իր ուժերին, վստահում է մարզչին, որը սովորեցնում է նրան չնահանջել ոչ մի դժվարության առջև: Պատահում է, որ նորեկ մարզիկը դժվարություններ է ունենում, վախենում է մենամարտից, բայց ընդամենը մեկ երկու ամիս պարապելով՝ փոխվում է նրա բնավորությունը, սկսում է վստահել իր ուժերին, դառնում է համարձակ: Բարձր մարտական ոգով տարվող մենամարտերն են հենց լավագույն ու դիտարժան դառնում:

- Առանձին դիտարժանություն են վայելում նաև մարզիկների կողմից նախքան մենամարտերը կատարվող վայրու կամ մուայթայերն ոճերով սահուն շարժումներից բաղկացած ավանդական արարողակարգերը՝ համահունչ թայլանդական երաժշտության ներքո: Մուայ թայի մարզիկը պարտադիր պետք է կատարի՞ դա:

- Մենք չենք պարտադրում մարզիկներին սովորել ու կատարել մուայ թային հատուկ արարողակարգեր: Բայց մուայ թայ մարզածելով անցկացվող խոշոր մրցաշարերում արարողակարգը կատարելը պարտադիր է: Մարզիկներին ցույց ենք տալիս, սովորեցնում՝ ինչպես ճիշտ կատարել: Վայրում մենակատարային է: Արարողակարգն ավելի շատ հնարավորություն է տալիս նկատել մարզածելի գեղեցկությունը:

- Չե՞ր գլխավորությամբ հինգ խմբում մարզվող սաների թիվն, այն էլ միայն Ստեփանակերտում, վկայում է Արցախում եւս մուայ թայի սիրված ու զարգացած լինելու մասին: Իսկ 33 կամ միջազգային մրցաշարերում ինչպե՞ս են իրենց դրսևորում Չեթ սաները:

- Ֆիզիկապես, տեխնիկապես մենք պատրաստ ենք տարբեր մրցաշարերում լավագույն արդյունք ցույց տալ: Էջմիած-

նում կայացած բաց առաջնության արդյունքները գոհացուցիչ են: Սակայն ցավալի խնդիր ունենք՝ կապված ֆինանսավորման հետ: Պետական բյուջեից հատկացվող չնչին գումարը չի բավարարում մեր սաների մարզահավաքների, միջազգային մրցաշարերի մասնակցության հետ կապված ծախսերը հոգալուն: Օգտվելով հնարավորությունից՝ ես մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում ծնողներին, որոնց ֆինանսավորմամբ հնարավոր դարձավ սաների մրցաշարին մասնակցելը: Առաջիկայում մուայ թայի Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններն են: Մենք պատրաստ ենք աշխարհին ներկայացնել մեր մարզիկներին, սակայն ֆինանսական խնդիրը դեռևս լուծված չէ:

- Իսկ ի՞նչ ճանապարհներ կան խնդրի լուծման:

- Փնտրում ենք հովանավորներ: Նախկինում «SBS» ընկերությունը որոշ հովանավորություն կատարում էր, որի համար շնորհակալ ենք, մինչդեռ հիմա այդ հնարավորությունը չկա: Դրանահավաք կկազմակերպենք, որին կարող են մասնակցել բոլոր մեր հայրենակիցները, որոնք անտարբեր չեն սպորտի նկատմամբ եւ ոչ միայն: միջազգային մրցաշարերում մեր մարզիկների ցուցաբերած լավ արդյունքներով ողջ աշխարհում կճանաչվի Արցախի--- անունը: Իսկ լավ արդյունքներ ունենալու համար թերեւս ամենակարեւոր նախապայմանը մարզիկի փորձն է, որը նա ձեռք է բերվում տարբեր մրցաշարերի մասնակցելով:

- Ցանկանում ենք անկտորում ընթացք դեպի վեհ նպատակներ, իսկ հույսը, որը կա ստեղծված իրադրությանը մեր հայրենակիցների արձագանքների եւ մարզիկներին ֆինանսապես սատարելու վերաբերյալ, թող շուտափույթ իրականություն դառնա:

- Շնորհակալություն:

ԱՐՃԱՆՅՈՒ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՄՐՅԵՆ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արցախում սպորտի ոլորտն առանձնանում է դեպի զարգացում ընթանալու միտվածությամբ՝ չնայած հաճախակի հանդիպող խոչընդոտներին: Պրոֆեսիոնալ եւ սիրողական պարապմունքների թիվն անընդհատ աճում է: Առողջ ապրելակերպ նախընտրողների մեջ քիչ չեն նաև պրոֆեսիոնալ մարզիկները, որոնք երկրի ներսում կազմակերպվող զանազան մրցաշարերին մասնակցելուց բացի հանդես են գալիս միջազգային առաջնություններում եւ հաղթողի կոչմամբ վերադառնում հայրենիք: Մեր մարզիկների՝ արտերկրում ցուցաբերած բարձր ցուցանիշները վկայում են Արցախում սպորտի զարգացած լինելու մասին, որը լրացուցիչ ենթատեքստ ունի Արցախի Հանրապետության համար: Սպորտի միջոցով ճանաչում են Արցախը:

Ներ տանելով չորս մարտում, դարձել է չեմպիոն, զբաղեցրել պատվավոր 1-ին տեղը: Հուշամրցաշարին մասնակցել են տարբեր երկրներից ուժեղագույն բռնցքամարտիկներ:



Մարզչի խոսքով՝ Մանվել Պետրոսյանի քաշային կարգում 18 մարզիկ էր պայքարում

հաղթողի կոչման համար: Մանվելը փայլուն հանդես եկավ՝ ապացուցելով, որ ինքը լավագույնն է: Սա առաջին ոսկին է, որ նվաճել է: 52 կգ քաշային կարգում մրցել է նաև արցախցի բռնցքամարտիկ Աշոտ Բեգլարյանը, որը զբաղեցրել է 3-րդ տեղ: Մանվել Պետրոսյանը ստացել է նաև «Հանդիսատեսի համակրանք» գավաթ: Մարզիչը նշեց, որ սաների ցուցաբերած արդյունքները միջազգային մր-

րեյ Աղասարյանի սաներ Բաբկեն Սարգսյանը (63կգ) զբաղեցրել է 1-ին տեղ, Անդրեյ Բեգլարյանը (45կգ), Գրիշա Կարապետյանը (37կգ), Իսլամ Տալկանչիեյը (49կգ), Իգոր Կարապետյանը (57կգ), Էդգար Գեորգյանը (63կգ), Արսեն Աղաքալյանը (53կգ) գրավել են 2-րդ, իսկ Արթուր Պետրոսյանը (63կգ) արժանացել է 3-րդ տեղի:

Մրցանակային տեղ է արձանագրվել նաև խառը մենամարտերի առաջնությունում: Հոկտեմբերի 11-14-ը Իսպանիայում (Գվադալախար) կայացած Խառը մենամարտերի (MMA) մեծահասակների միջև Եվրոպայի առաջնությանը մասնակցելու էին մեկնել արցախցի մարզիկ Թաթուլ Ավագյանը (18+) եւ մարզիչ Գարեգին Աղաքալյանը: Թաթուլ Ավագյանը պայքարել է - 77.1 քաշային կարգում: Մարզիչ Գ. Աղաքալյանից տեղեկացանք, որ Եվրոպայի առաջնությունում Թաթուլին հաջողվել է զբաղեցնել 3-րդ մրցանակային տեղ:

Մարզիչը մանրամասնեց, որ առաջնությանը մասնակցում էր 22 պետություն: Թաթուլ Ավագյանը երեք մենամարտ է ունեցել: Առաջին երկու մենամարտում հաղթանակներ է արձանագրել, եզրափակչում մենամարտել է ռուս մրցակցի հետ, արդյունքում դարձել բրոնզե մեդալակիր:

Առաջիկայում եւս սպասվում են խոշոր մրցաշարեր, որոնց մասնակցելու համար մարզիկներ կմեկնեն Արցախից:

Սույա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՌՄԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.10.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: